Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԸԼԸ-ՊՈՒՂԻ

ԻՄԱՍՏԱՍԷՐ ԵՒ ԱՌԱԿԱԽՕՍ

ՀԱՅՈՑ

Երկրորդ տպագրութիւն

Տպագրուեցաւ ծախքով մեծապատիւ պարոն

ԻՍԱՋԱՆԻ ԹԻՒՆԻԲԷԿԵԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1904

10
1018

ՓԸԼԸ-ՓՈՒՂԻ

ԻՄԱՍՏԱՍԷՐ ԵՒ ԱՌԱԿԱԽՕՍ

ՀԱՅՈՑ

Երկրորդ տպագրութիւն

ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՂԱԶԱՐԵԱՆ
ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1904

Дозволено цензурою 9 Февраля 1904 г.
г. Тифлисъ.

106576

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ ԻՍԱՋԱՆ ԹԻՒՆԻԲԻԿԵԱՆՑ

Ի Թիֆլիս

Ամենասիրելի հայրենակիցդ իմ.

Շատ և շատ ցաւալի է տեսնել՝ որ Հայ ժողովուրդն-արական և իգական՝ ամենամեծ մասամբ կարդում է օտար լեզուներով գրուած գրքեր, մանաւանդ անբարոյականացնող վէպեր, պատճառաբանելով՝ թէ չկայ Հայոց գրականութեան մէջ հանրամատչելի, զուարճալի, հրահանգիչ, խրատական և միանգամայն ընթերցանութեան ախորժակը զրգռող գիրք։ Այդ ընտրելագոյն և շինողական յատկութիւնները ունի միայն Հայոց իմաստասէր և առակախօս Պըլը-Պուլին, որի Ա. տպագրութիւնն արդէն սպառուած է վաղուց՝ թողլով Հայ հասարակութեան մէջ ուշագրաւ համակրութիւն։ Հայ հայանքի այդ համակրութիւնն ստիպեց ալեզարդ ծերունիս պատրաստել Բ. տպագրութեան համար նոյնը հանրամատչելի լեզուով։ Որը և ահա մեծ

վստահութեամբ և խորին յարգանօք նուիրում եմ Ձերդ սիրելութեան, որպէս զի Ձեր և Ձերայնոց պանծալի անունն և յիշատակն ևս անմահանայ զրքիս հետ յաւիտեան, որով միշտ կմնամ աղօթարար և երախտապարտ խոնարհ ծառայ Հայոց.

Մակար եպիս. Բարխուդարեանց

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Հարկ չկայ ասել թէ քաղաքական աշխարհն արդէն ընդունած է զուարճաբանութիւնը իբրեւ կեանքի օգտակար միջոցներից մին. քանզի զուարճաբանութիւնն զէթ առ վայր մի փարատում է տրտմութիւնը, հեռացնում է սրտամաշ մտածմունքը, ցրում է հոգեկան մելամաղձութիւնները, մեղմում է տխրութիւնը եւ մարմնական ցաւերը։

Հին ժամանակներում կայսերաց, թագաւորաց, սուլթանաց, շահերի, խալիֆների, նախարարների, մէլիքների եւ իշխանների մօտ գտնուում էին զուարճաբաններ, առակախօսներ, ծաղրածուներ, սրախօսներ, միմոներ եւ մնջկատակներ, որոնց զուարճաբանութեանց շնորհիւ ոչ միայն թեթեւանում էին նոցա օրուան կրած դատական ծանրութիւններն, այլ եւ երբեմն փոխուում էին նոցա պաշտօնական անդառնալի վճիռներն անգամ եւ կախաղանից ու աքսորներից ազատուում էին յանցաւորներն։

Արցախի Վարանդայ գաւառի Աւետա-

բանոց գիւղի վերջին Մէլիք-Շահնազարի մօտ եւս եղած է Պողոս անուն մի հայ զուարճաբան, որի անունը նոյն մէլիքն փոխած է «Պըլը-Պուղի» այսինքն է խենդ Պողոս։ Շատ եւ շատ ցաւալի է, որ Պուղին ունեցած չէ ժամանակակից մի զրող, որով ամբողջապէս լոյս կը տեսնէին նորա խօսածներն, կանմահանար զուարճաբանի յիշատակն եւ մի զրքոյկով կաւելանար մեր աղքատիկ զրականութիւնն։ Աւա՜ղ, Հայաստանում, ո՞ զիտէ, քանի՞ քանի այսպիսի զուարճաբաններ, առակախօսներ, իմաստասէրներ եւ սրախօսներ եղած են, որոց քանաւոր, խրատական խօսածներն յօրս ցնդած եւ կորսուած են՝ առանց զրելու եւ առանց ի լոյս հանելու։ Պարզապէս երեւում է, որ կարեւորութիւն տուած չեն մեր նախնիք այս ճիւղին։ Ըստ իմ կարծեաց խմաստասէր եւ զուարճաբան Պըլը-Պուղու պարզ առակներն, զուարճաբանութիւններն եւ սրախօսութիւններն իւրաքանչիւր հայի համար աւելի արժէք պէտք է ունենան, քան թէ Եզոպոսին, Նասրատդին-Հոճային, Տանթէին, Քռիլովին, Բալա-կիրեւին եւ Լաֆոնդէին ասածներն։ Որովհետեւ Պըլը-Պուղու ասած-

ներն ըղխած լինելով զուտ Հայկական կեանքից, Հայկական վճիտ աղբիւրից, աւելի յարմար են Հայկական սովորութեանց, Հայկական ընաւորութեանց եւ Հայկական առ տնին ընտանեկան կենաց, վարուց եւ բարուց։ Այս պատճառաւ՝ թէ եւ ուշ, (լաւ է անագան քան ոչ երբէք) սակայն մեծ նեղութիւն կրելով եւ ամիսներով դեզերելով, որչափ կարելի եղաւ ձեռք բերել, ի մի վայր հաւաքեցի ծերունիներից՝ իմաստասէր Պուղու խօսածները, որք մնացած էին աւանդութեամբ գիւղերի եւ Շուշու 90—100 ամեայ ծերունեաց բերաններում։ Եւ ահա ի լոյս հանելով երկրորդ անգամ, նուիրում եմ մեր ամենասիրելի Հայ ազգին, յուսալով, որ ամեն ոք զրքիցս կը քաղէ իւր բաժին խրատական օգուտը։

Պըլը-Պուղին ծնուած է մօտաւորապէս 1734 թուականին Աւետարանոցում եւ վախճանած 1815-ին եւ թաղուած այն փոքրիկ քարայրում, որ գտնուում է Շօշու աւանի եւ Արկաթալու շինի սահմանում (տես Արցախ եր. 132)։

Սեպուհ պարտք համարեցի յայտնել հետեւեալ ամենակարեւոր կէտերը.

Ա. Որովհետեւ նախկին տպագրութեան մէջ պահած էի Վարանդայի զաւառական բարբառը, այս երկրորդ տպագրութեանս մէջ չպահեցի նոյն բարբառը, այլ փոխեցի այժմեան գործածական աշխարհիկ բարբառի՝ լեզուն հանրամատչելի անելու համար. վասն զի Տաճկաստանի, Պարսկաստանի եւ Բուլղարիայի Հայոց համար անհասկանալի էր նախկին տպագրութեան լեզուն:

Երկրորդ՝ որովհետեւ փոխուեցաւ առաջի տպագրութեան լեզուն, վասն որոյ աւելորդ համարուեցաւ երկրորդ տպագրութեանս մէջ գետեղել առաջնոյն իրականութիւնը եւ բառարանը:

Երրորդ՝ որովհետեւ արդէն վաղուց սպառուած էր առաջին տպեալն եւ կային շատ պահանջողներ, ուստի հարկադրուեցայ մեր սիրելի ժողովրդեան յաճախակի խնդրուածներից կատարել երկրորդ տպագրութիւնս:

Չորրորդ՝ բաց թողի լսելեաց անախորժները ամբողջապէս, ի նկատի ունենալով որ կարող են կարդալ Պուղու առակները եւ անչափահաս տղայ եւ աղջիկ, պատանի եւ օրիորդ:

Հինգերորդ՝ Պուղին ոչ միայն եղած է մէլիքին զուարճաբանն, այլ եւ սուրհանդակն եւ հարազատ մէլիքների եւ քաջերի սերտ բարեկամն, ինչպէս երեւում է այդ Գաղտնիք Ղարաբաղի պատմութիւնից, եւ բազմիցս արդարադատ դատաւոր:

Մնամ ազգիս Հայոց ամենախոնարհ ծառայ եւ միշտ աղօթարար.

Մակար եպիս. Բարխուդարեանց

1.

Պուղին տարան դպրոց կարդալ և գրել ուսանելու։ Վարժապետն կրկնում է այբ, այբ, այբ. բայց չէ պատասխանում Պուղին։ Երբ հարցնում է վարժապետն չպատասխանելու պատճառը. ասում է Պուղին.—Վարժապետ, վախում եմ թէ այբը սովորեմ, ասես՝ *բենն* էլ սովորիր, *գիմն* էլ, *դիրքս* էլ ամենը կարդա։

2.

Երախայ ժամանակ Պուղին տանում են եկեղեցի, «Հրաժարիմքի» ժամանակ մայրն ստիպում է որ երեսը դարձնէ դէպի արևմուտք. պատասխանում է Պուղին,—Ես խառով չեմ Աստծուց, ով որ խառով է Աստծուց, նա շուռ տայ իւր երեսը։

3.

Պուղին տեսնելով, որ իւր ձեռքից առնելով տանում են տարեկան բերքերը ցորեն, գարի, ևն. կարկուտն, հեղեղն, մարախն և

թրթուրն, այնուհետև ցանում է դեռնա-խնձոր, դաղար, բողկ, բաղուկ (ճակնդեղ) սոխ և սխտոր։ Երբ սկսում է տեղալ սաստիկ կարկուտն, Պուղին իւր սրահի տակից կոչում է դէպի ամպն.—Էյ, այլևս չես կարող ջնասել ինձ, բայց եթէ իջնելով այդ տեղից և առաջներովդ մէկ մէկ դեռնից հանելով ցանածներս։

4.

Մի թերուս սափրիչ Պուղու գլուխը ածիլելու ժամանակ շատ տեղերը կտրում է և կտրած տեղերին փակցնում բամբակ. այնպէս որ գլխի ամբողջ կէսը ծածկուում է բամբակով։ Պուղին ասում է սափրիչին.—Ուստա, մին հայելին ինձ տաս՝ տեսնեմ։ Հայելուն նայելուց յետոյ՝ ամբողջ վարձը դնում է հայելու վերայ և տալիս է սափրիչին, որն ասում է. Պուղի, գլխիդ կէսը դեռ չեմ ածիլել։

—Շատ շնորհակալ եմ, ուստա, գլխիս կէսում բամբակ ես ցանել, միւս կէսումն էլ բուրդ պէտք է ցանել տամ։

5.

Մի մարդ, տեսնելով Պուղու արխալուղը տեղ տեղ կարկատուած նոր կտորներով, ասում է, Պուղի, արխալուղդ տեղ տեղ շնորհաւոր լինի։

—Օրումէջ (օր ընդ մէջ) ապրիս, ապեր (հայր). նշանակում է մի օր առողջ լինիս և մի օր հիւանդ)։

6.

Մի մարդ մեծ եռանդով պատմում է անկապ և անհաւատալի պատմութիւններ ժողովուած մարդոց. Պուղին, նկատելով որ միամիտ ունկնդիրներն ընդունում են պատմած սուտերը իբրև ճշմարիտ իրականութիւն, ծաղրական ձևով հարցնում է պատմողին.—Ապեր, ձեր ազգի մէջ փինաչի (հնակարկատ) եղած է։

—Հա, քեզ մատաղ, հայրս փինաչի էր։

—Դորա համար է, որ այսչափ կարկատում ես այդ պատմութիւնը։

7.

Մի ուրիշ գիւղացի ևս նոյն բազմու-

թեան մէջ պարծենում էր ձեռքի և գլխի չարժումներով իբրև ամենալաւ հնձող, որ ինքն օրական հնձում է հարիւր խուրձ ցորեն հանգիստ կերպով։ Պուղին հարցնում է և սրան.

—Եղբայր, իսկի եալանչի փահլուանութիւն արած ես։

—Պապս արած է եալանչի փահլուանութիւն եօթն տարի։

—Դորա համար ես խօսքով հեշտ հեշտ օրն 100 խուրձ հնձում։

8.

Մի երիտասարդ որսի կերթայ Պուղուն հետ այն պայմանաւ՝ որ եթէ երկուսից մին արջի ձեռքն ընկնելու լինի, միւս ընկերն ճգնի մահու չափ և ազատէ իւր ընկերը արջի ճանկերից։ Անտառի խորքում յարձակում է մի արջ Պուղու վերայ և ճանկերով զարկում Պուղու գլխին, ուսերին և մէջքին։ Իսկոյն ընկնում է գետնին Պուղին և կատարեալ մեռածի պէս ներս քաշում իւր շունչը։ Արջն իւր ականջը մօտեցնում է ընկածի բերանին, որը և մեռած կարծելով

թողնում, հեռանում է։ Այս ամեն եղելութիւնը տեսնող ընկերն, որ զինքը արջի ճանկերում թողած և աճապարանօք բարձրացած էր ծառի վերայ, իջնելով հարցնում է. Աստուած սիրես, ա Պուղ, արջն ականջիդ ինչ ասաց։

—Ասաց. «Այս քեզ խրատ. այսուհետև այլևս չընկերանաս այդպիսի շան տղայի հետ, որ ինքն փախչում է ծառ բարձրանում և քեզ թողում արջի ճանկերումն։

9.

Մի անգամ Պուղին սաստիկ ծեծում է Մէլիքենց շունը, որի կլանչոցը ճանաչելով, Մէլիք-Շահնազարն ասում է Պուղուն. դու ով ես, որի՞ տղան ես, որ ծեծում ես իմ շունը։ Պատասխանում է.

—Աղա, քո շունն մէլիքի շուն է, իրաւունք ունի ամեն դռնից անցնել. բայց, Մէլիք, ցաւս այն է, որ գիւղիս բոլոր շուներն քո շանից սովորելով կը գան և դռնիցս անցնելով, շնանոց կը շինեն տունս։ Մէլիքն, հաւանելով Պուղու այս պատասխանը, այն օրից ընդունում է իւր մօտ իբրև խելօք մարդ։

10.

Մի անգամ Մէլիքն շրջելով Աւետարանոցում՝ զանազան հարցեր է տալիս Պուղուն և պահանջում պատասխանները։ Պուղի, այս մարդն ինչի այնքան աղքատ է։

—Մէլիք, խելքի լոյսը բաժանելիս սա բաղնիքումն է եղել, մերկութեան պատճառաւ ամաչել է դուրս գալ և ստանալ իւր բաժինը։

11.

Ի՞նչ պատճառաւ այսպէս մոլորուած է այս մարդն։

—Աղայ, վերջացել է սորա վառօդն (դրամն չունի), որ գնէ օղի, խմէ, հարբի և ուրախութիւն անէ։

12.

Պուղի, այս մարդն ինչի՞ մինչև լոյս աշխատում է և առաւօտից մինչև երեկոյ քնանում։

—Նորա համար, աղայ, որ ծախել է լոյսը և գնել մութը։

13.

Ագա, Պըլը-Պուղի, այս մարդն ինչի՞ այսպէս կռուարար, անամօթ և աներես է։

—Աղայ, երեք անգամ տաճկութիւն է ընդունել և երկու անգամ հրէութիւն...։

14.

Այդ մարդի տունն լաւ շինուած էր, ինչի՞ քանդել է և նորից է շինում։

—Մէլիք, վառօդն շատացել է, փողը ծախելու տեղ չէ գտնում։ Մարդ որ շատ հարստանայ աչքին ծուռ կերևին տան պատերն և սիւներն։ Տունը քանդել է, նորից է շինում, որ թէ աչքին ուղիղ երևին պատերն և սիւներն և թէ պակասի դրամն։

15.

Այս մարդն ի՞նչ պատճառաւ այնքան շուտ շուտ է խօսում, որ բնաւ չեն լսացուում խօսքերն։

—Անգղիոյ պողպատից շինուած են սորա ծնօտների եայերն (ոսկրներն) և թիւնդ (բարկ) քացախում մխուած։

ՀՈՎՀ. ՀԱՅԿԱԶ
Գ. ԱՂԲԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

16.

Պուղի, բա այս ինչից է, որ այսքան ծանր է խօսում։

—Մէլիքն ապրած կենայ, այս մարդի շանին եայը թուլացել է, պէտք է մխել Հընկաստանի նապաստակի արեան մէջ։

17.

Այս մարդը երբեմն տեսնում եմ շատ ուրախ, երբեմն էլ շատ տխուր։

—Խմած ժամանակ ուրախ է լինում, չխմած ժամանակ տխուր։ Քանի լաւ ժամերում ուրախութիւն է անում նոր պսակուած տղի նման, քիփը թողելուց յետոյ սուգ է պահում փեսան մեռած հարսի նման։

18.

Մի օր խուռն բազմութիւն հաւաքուած է լինում Ամարասի դաշտում։ Վարելահող էր պահանջում ժողովուրդն Մէլիք-Շահնազարից։ Մէլիքն չէր կամենում տալ, Իբրահիմ խանն աշխատում էր իրաւախոհ անել ժողովուրդը Մէլիքի հետ, որ ունեցաւ ան-

յաջող ելք։ Պուղին տեսնելով որ խեղճ ժողովուրդն երկիւղից չփոթուելով չէ կարողանում ստանալ իւր պապենական արդար իրաւունք հողը և խանն էլ չկարողացաւ պաշտպանել հասարակութեան շահը, խակոյն գնում է և բերում մի երկար ձող և կանգնում իւր տեղում։ Խանն հարցնում է.

—Պըլը-Պուղի ինչի՞ համար բերած ես այդ երկար փայտը։

—Խան, բերած եմ որ սորանով չափեմ քո խելքը, Մէլիքին խելքը և ժողովրդեան խելքը։

—Ի՞նչ պատճառաւ։

—Այն պատճառաւ, որ ժողովրդեան տալու է հող, որով թէ ինքը կառավարէ իւր գերդաստանով և թէ կառավարէ Մէլիքը։ Այն պատճառաւ որ ժողովուրդն համարեա թէ չունի լեզու, որով չէ կարողանում պաշտպանել այն անկապտելի իրաւունքը, զոր յաւիտենական հրովարտակաւ իրան տուած են Աստուած և բնութիւնն...։

Մէլիքն խակոյն յանձնում է ժողովրդեան հողերը՝ յարգելով Պուղու գործնական փաստաբանութիւնը։

19.

Մէլիքի դատաստանին ներկայանում են երկու կանայք, որից մին պնդում է թէ այս հաւն իմն է. և միւսն հակառակը պնդելով թէ իմն է. «ես եմ թուխս դրել։ Ինաւ չկար վկայ, մէլիքն մնում է երկբայութեան մէջ ուստի և դժուարանում է վճիռ տալ։

—Աղա, այս հաւն ունի մի ճշմարտախօս վկայ, որ է իւր բունն... մէլիքի հետ գնում են փողոց, բայց թողում հաւը, որ ուղիղ գնում է իւր բունն։ Տեսնում ես, աղայ, ինչպէս անսուտ վկայ է հաւի բունն։

20.

Պուղին հարցնում է ձուածախին.

—Ձուիդ քանիսն ես տալիս 15 կոպէկի։

—80-ը կը տամ։

—Թանկ է, եթէ հարիւրը կը տաս, կառնեմ։

—Մէլիքն 20,000 թուման փող ունի, ինչ կը լինի որ ութսունը առնես 15 կոպէկով։ Պուղին չպատասխանեց, այլ անխօս հեռանում է. փոքր ինչ յետոյ սահում են ձուածախի ոտքերն, ջարդուում են բոլոր

ձուերն և սկսում է աղիողորմ լալ ձուածախն։ - Այ տղայ, քանի՞ ձու կար ամանումդ, ասա՛, որ փողերը տամ քեզ 80-15 կոպէկով։

—Զգիտեմ, քեզ մատաղ Պուղի։

—Դու, որ չգիտես քո ձեռքով համբուած ձուի հաշիւը, չան տղայ, ո՞ր տեղից գիտես որ մէլիքն քսան հազար թուման ունի։

21.

Պուղի առել ես պսակիդ հրամանը։

—Մէլիք, առաջ պորտ պորտ արին և ասացին. «Հաս է»։ Ջորիս կաշառք առին, յետոյ ասացին.

Մարալ ջորի,
Ոսկի մատանի
Ամբը եամանի,
Հեռու աղդականի
Հրաման տուր, տանի։ Եօթն պորտանց է, հաս է, հրամանը դրեցէք։

—Այ տղայ, դու խե՞նդ էիր, որ իմ թանկագին ջորին տարար մի հրամանաթղթի տուիր։

—Աղան ապրած կենայ, ջորին կը գայ։

Պուղին պռակուելուց յետոյ գնում է Ամարաս և այս խօսքերը ասելով բերում և մէլիքին յանձնում ջորին, «Մարալ ջորի,

Գալուստդ բարի,
Հարսանիքս արի,
Անցաւ մին տարի»։

22.

Մի մարդ գիւղից դուրս հարցնում է. Պուղի. այս գառնը տուողն ասաց. «Եթէ թող տաս այս գառնը, դու կը մեռնես, եթէ տանես տուն, կինդ կը մեռնի. այժմ ինչ անեմ, մնացել եմ երկու սրի մէջ։

—Ոչ թող կը տաս, որ դու մեռնես, ոչ էլ տուն կը տանես, որ կինդ մեռնի։ Մի լաւ կրակ վառիր, մորթենք, լաւ խորոված անենք, ուտենք. դու էլ ողջ կը մնաս, կնիկդ էլ։

23.

Իբրահիմ-խանին այցելութեան է գնում Մէլիք-Շահնազարն, որի հետ գնում է և Պուղին։ Վերջինս, տեսնելով որ անիրաւ վճիռ է արձակում խանն, իսկոյն բերում է

մի ձուլիչ, որը տեսնելով հարցնում է խանն. Պուղի, ինչու բերած ես այս մարդը։

—Խան, խելքդ հնացել է, այս վարպետը բերել եմ որ նորից աւելի լաւ ձուլէ։

Խանն, զդալով իւր սխալը, Պուղուն է յանձնում հեռաւեալ դատաստանները և ինքն ականատես լինում մէլիքի հետ։

24.

Բէկ կարծուած մի պարսիկ յափշտակել էր խեղճ հայից մի ձի. որը ճանաչելով հայն թախանձում էր որ Պուղին իրան յանձնէր իւր ձին։ Պուղին ասում է.

—Այ բէկ, այս ձին քոնն է։

—Այո, իմն է։

—Ուրեմն վեր առ թամբը և մի լաւ քորիր։

Երբ մօտենում է բէկն, ձին ցոյց է տալիս դժկամակութեան յայտնի շարժումներ։ Ապա ասում է.

—Բէկ, դու մի փոքր հեռացիր, ա հայ, դու գնա։

Հայն մօտեցածին պէս քծնում է ձին և անում ուրախութեան և տիրասիրութեան ցոյցեր։ Ձին տալիս են հային։

25.

Ներկայանում են մի հայ գիւղացի և մի մահմեդական հովիւ։ Վերջինս, տեսնելով հայի ահագին գամփռ շունը, աշխատում է մի հնարքով ձեռք ձգել, քանզի ոչխարի համար խիստ յարմար էր, վասն որոյ խնդրում է Պուղուց տալ իրան շունը։ Պուղին հարցնում է.

—Հովիւ, շանդ անունը տալով կանչիր և առ, գնա։

Հովիւն կանչում է. Ալաբաշ, Ալան, Ղափլան. բայց շունն բնաւ ուշադրութիւն չի դարձնում. մտածում է որ բռնէ, շունն հաչում է վերան և ուզում է խածնել։

—Ա հայ, դու կանչիր շունդ և առ գնա։

—Բոզդար Բոզդար, եկ գնանք։ Իսկոյն գնում է շունն տիրոջ ետևից։

26.

Մի յայտնի դող յափշտակել էր թուրք մաքդոնցի մտից արծաթի դրամները. վկայ բնաւ չկար. Պուղին եռացեալ ջրի մէջ է ձգել տալիս դրամները. երբ երևում է իւղն ջրի երեսին, խանն ուրախութեամբ վկայում է որ

դրամներն մաքդոնցինն են. որովհետև մաքդոնցներն իւղոտ ձեռքերով են ստանում դրամները։

27.

Երկու հայ և երկու թուրք առած մի կով և եղն ներկայանում են դատարանին։ Տասն թուրք անձինք երդմամբ վկայում էին որ անասուններն այս թուրքինն է։

—Ես հաւատում եմ ձեր երդման առանց կասկածի. ասում է Պուղին, ամենակարևոր է և եղին ու կովին վկայութիւնն ևս։ Ապա հրամայում է տանել երկու անասունները նախ թուրքի գիւղի մօտ արձակել և յետոյ հայի գիւղի մօտ։ Տանողներն վկայեցին որ անասուններն բնաւ չմտան թուրքի գիւղն, այլ ուղիղ գնացին և բառաչելով կանգնեցին հայի դրան։ Տալիս են հային։

28.

Խանն կոչում է զարմացած. Պուղի, դու որ այսչափ խելօք ես, ինչ պատճառով խենդ են անուանել քեզ մարդիկ։

—Միայն նորա համար, որ ես խենդ չանուանեմ զիրենք։

29.

Մէլիքին հրամանաւ Պուղին մի կարեւոր գործով գնում է Աղդամ խանի ճամբանոցն. դիշերն գողանում են Պուղու ձին, որ մէլիքինն էր։ Անմիջապէս գանդատում է խանին, որն ասում է.

—Պուղի, ինչի՞ արթուն չմնացիր, որ ձիդ պահէիր։

—Խան, եթէ ես իմանայի որ դու քնացած ես, ես անպատճառ արթուն կը մնայի։

Խանն իսկոյն նուիրում է Պուղուն մի լաւ ձի։

30.

Շօշու գիւղի միջով անցնելու ժամանակ մէլիքն սաստիկ բարկանում է երկու մարդոց վերայ, որ ոտքի չկանգնեցին։

—Մէլիք, ասում է Պուղին, այս մարդիկն հարբած են, այս րոպէիս Աստուած չեն պատուում ոտքա, քեզ ինչպէս պատուեն, Աստծուց չեն վախում, քեզանից ինչպէս կը վախեն։ Դէ ծանր կաց, դլուխդ կախիր և անցիր գնա, չտեսնալ ձևացնելով։

31.

Պուղին մի քանի օրուայ բացակայութիւնից յետոյ երբ դառնում է տուն, տեսնում է որ կինն մորթել է տուել հաւերը, պատրաստել տուել լաւ կերակուրներ, անկողնի մէջ հիւանդ ձևացել և հինգ կոյս աղջիկներ տրորում են նորա ոտքերը։ Պուղին հարցնում է—Ա՛յ կին, այս ինչ պատրաստութիւն է։

—Ա. մարդ, տարին մի անդամ մի օր խենդութիւն է գալիս իմ վերայ և հիւանդանում եմ, եթէ այսպէս չանեմ, չեմ առողջանալ։

Պուղին, յայտնելով անկեղծ ցաւակցութիւն, կնոջ հետ վարուում է խիստ քաղցրութեամբ. բայց հետևեալ շաբթում երկու անդամ ծեծում է իւր կինը խենդ ձևանալով։ Կինն հարցնում է զայրացած.

—Ա. մարդ, ինչ ես անում, ինչ յանցանքիս համար ես զիս ծեծում։

—Ա՛յ կին, իմ ջանս քեզ մատաղ, շաբաթն երկու անդամ խենդութիւն է գալիս իմ վերայ, մինչև որ քեզ լաւ չեմ ծեծում, չէ անցնում խենդութիւնս։

—Ա. մարդ, ասում է կինն, քո խենդութիւնն շատ թիւնդ է իմ խենդութիւնից. ծեծելով կըսպանես դու ինձ. եկ ես իմ խենդութիւնը թողեմ, դու էլ քոնը թող։— Համաձայնում են։

32.

Մէլիքն ապրած կենայ, ասում է մի այրի կին, 6 տարի առաջ 100 ձու տուել եմ Խոջա-Մարտուն, 100 ձուն 6 տարում 600 հաւ կլինէր. 600 հաւն էլ 5-5 կոպէկով անում է 30 բուբլի։ Խնդրեմ առնէք և ինձ տաք դրամները։

—Խոջա-Մարտի, առել էք 100 ձուն։

—Այո, Մէլիք, առել եմ։

—Դէ ուրեմն գնա և վճարիր փողերը։ Ապա խօսքը Պուզուն դարձնելով ասում է. այդ ինչ կշիռ է։

—Մէլիք, այս կշիռը բերել եմ որ կշռեմ ձեր խելքը, պառաւին խելքը և խոջին խելքը։ Երեքն էլ շատ թեթև են։

—Պատճառ, ա խենդ։

—Քո խելքն թեթև է այն պատճառաւ, որ չես հարցնում թէ, ա պառաւ, եփած ձու

ես տուել թէ անեփ. խոջին խելքն թեթև է որ եփած ձուն կերել է, ամաչում է ասել թէ եփած է եղել ձուերն. պառաւին խելքն թեթև է և խիղճն քնացած, որ առանց ամաչելու 30 բուբլի է պահանջում։ 100 եփած ձուին գինն շատ շատ 20 կոպէկ է. բայց դու, Խոջա-Մարտի, մին մանէթ տուր այդ պառաւին որ գնայ։ Որով վերջանում է դատն։

33.

—Պըլը-Պուզի, հայրս մեռել է. սդաւոր եմ, եթէ վաղն աչքիս չերևիս, 3 չուալ կորեկ կը տամ քեզ։

—Մէլիքն ապրած կենայ, չեմ երևիլ։

Պատարագից յետոյ, երբ դաւառի բոլոր քահանաներն կատարում էին ննջեցեալի կարգը եկեղեցու դաւթում, և ահա Պուզին, Մէլիքի հինգ բարակ շների (թաղի շուն) վերայ ձգած մի մի զոյգ չուալ, փորերը տափակ չուանով ամրապնդած, ջորու կարաւանի պէս իրարից կապած և վերջի բարակի պարանոցից մի փոքր զանգակ կախած՝ երևեցաւ։ Ծիծաղում են ամեն քահանաներն

և ժողովուրդն և խանդարու�է երդեցողութիւնն։ Մէլիքն երկարում է դէպի Պուղին և ասում.

—Ադա, ես քեզ չասացի, որ աչքիս չերևիս։

—Մէլիք, հայրս, մայրս քեզ մատաղ, երախաներս սոված կոտորուում են. եկել եմ որ կորեկը տանեմ։ Լոյս դառնայ հօրդ հոգին։

34.

Մի անգամ մէլիքն խմում է պատուական գինի, Պուղին ասում է.

—Աղա, թէ որ մի բաժակ էլ ինձ տաս, հայրդ կը գնայ Արքայութիւն։ Առաջին բաժակը խմելուց վերջն ասում է.—Հայրդ ճանապարհ ընկաւ։ Առնում է երկրորդ բաժակը և խմում։

—Պուղի, հասաւ հայրս թէ ոչ։

—Աղա, բոլորովին քիչ է մնացել որ հասնի։ Մի բաժակ ևս խմելով ասում է. Աղա, հայրդ կանգնել է Արքայութեան և Դժոխքի մէջ տեղը։ Վերջին բաժակը խմելուց յետոյ գոչում է.—Ըհը՛։

—Ադա, հայրս Արքայութիւն գնաց թէ դժոխք։

—Մէլիք, մին թրնփոց եկն. չգիտեմ Արքայութիւն գնաց թէ Դժոխք։

35.

Ոչսի գնալիս ճանապարհին պատահում է մի նապաստակ, որ շուարած բարակների վաղելուց, անցնում է Պուղու մօտից։ Սա կորեկ հացի կէսը այնպէս ուժգին զարկում է, որ խակոյն ընկնում է նապաստակն, կոչում է.—Մէլիք, ով է ասում օգտակար չէ կորեկ հացն. թէ զէնք է և թէ հաց։

36.

Անտառի ստորոտում վայրենի վարազ խոզն յարձակում է Պուղու վերայ, որ կրակում է հրացանը, բայց չեղում է գնդակն և յարձակում է վարազն։ Ցաչողում է Պուղուն նստել վարազի վերայ, որ սատիկ շփոթուած վազում է սրընթաց ուղիղ ճանապարհով և չէ կարողանում շարժել գլուխը աջ կամ ձախ։ Կանչում է մէլիքն։

—Ադա, վախես ոչ, վախես ոչ։

—Մէլիք, գնում եմ Դանձակ, եթէ նամակ ունիս, տուր ինձ, տանեմ. եթէ այս ընթացքով գնալու լինիմ, երեկոյան Դանձակում կը լինիմ։

Շատ վազելուց դադարում է վարաղն, Պուղին երկսայրով խառնում է թոքերը և վար իջնելով ասում.—Մէլիք, այս շատ լաւ դառաւ թէ ձիով ճանապարհորդեցի և թէ որս արի։

37.

Մի ուրիշ անդամ էլ որս անելիս Պուղին վիրաւորուում է մի մատակ արջից. բժիշկներն պատուիրում են լաւ կերակրել և լաւ ըմպելիքներ խմացնել։ Երեք օրից յետոյ Մէլիքն այցելում է և հարցնում.

—Ադա Պուղի, ինչպէս ես այժմ։

—Մէլիք, ողորմի այն արջին հօրն, երանի թէ շաբաթն մի անդամ ինձ այսպէս վիրաւորէր, գու էլ ամեն օր ինձ համար այսպէս լաւ կերակուր և Կախեթի ու Շանպանեայի գինիներ ուղարկէիր։

38.

Մէլիքն իւր բաղէն (թաւար ղուշ) արձակում էր կաքաւների, փասեանների և լորամարդիների ետևից, բայց բաղէն, այդ թռչուններից բռնելու տեղ, ուղիղ գնում էր Մէլիքենց հաւերը բռնում և խեղդելով լափում։ Ասում է Պուղին. Լաւ աշխատանքի վերայ ենք, Մէլիք. «Լաւ որս է անում մեր թաւար ղուշը, աչքդ լոյս, Մէլիք»։

39.

Մի անգամ մատռուակ է լինում Պուղին և հարցնում է սեղանակիցներին.

—Գինին ինչպէս մատակարարեմ ես ձեզ, արդարութեամբ թէ Աստուծոյ պէս։

—Աստուծոյ նման, Աստուծոյ նման, ասում են շատերն։

Պուղին ոմանց բաժակն մի կաթ, ոմանց երկու կաթ է կաթացնում, ոմանց կէս և ոմանց ամբողջ լցնում է բաժակները և տալիս։

—Ադա, Պուղի, էլի խենդութիւնդ բռնեց, ինչ ես անում։

—Մէլիքն ապրած կենայ, հանդիսա-

կանանքն ասացին՝ Աստուծոյ նման. Աստուած ամեն մարդոյ մին չափով չէ տալիս, այլ ոմանց տալիս է չափազանց շատ, ոմանց միջակ, ոմանց էլ բոլորովին քիչ։ Ուրեմն արդարութեամբ լցնեմ, որ հաւասար լինի։

40.

Սատկում է Մէլիքի որսկան բարակ շներից մին. Մէլիքն չափազանց ափսոսում է և տխրում։ Պուղին հետևեալ առաւօտեան սև շորեր հագած երևում է և ասում.— Մէլիք, գլուխդ ողջ լինի, քեզ մատաղ։

—Այս ինչ սև շորեր ես հագել, ա պլը կատար (խենդ գլուխ).

—Սատկած շան սուգը պահելու համար. ասել եմ ժողովրդեան որ ամենքն էլ սև հագնեն և սուգ պահեն։ Թագաւորի նման հայրդ մեռաւ, շան համար ես տրտմում։

41.

Պուղու այս արարմանց վեցայ չափազանց բարկանում է Մէլիքն և հարցնում Պուղուն.

—Ա՛ շան տղայ, քեզ ինչ պատիժ տամ, որ խելօքանաս։

—Սև բողկը լաւ եփել տուր և ինձ ուտեցնել տուր. սորանից աւելի պատիժ չլի՛ իր. կը խելօքանամ։

Բերում են եփած բողկը, Մէլիքն, առած իւր գաւազանը, կանգնում է Պուղու մօտ և սոիպելով ասում.—Կեր, ա լակուտ, ինչ համ ունի.

—Մէլիք, քեզ մատաղ սկի եփած արջի թրեք չես կերալ։

42.

Ադա, մին քիչ խոնարհութիւն անես ինչ կը լինի։

—Աղա, սատանան իմանում է որ խոնարհութիւնն տուր է գալիս Աստուծոյ, էշ է լինում, կանգնում մի ուսումնարանի առաջ. դուրս են գալիս աշակերտներն և հինգ հինգ, վեց վեց նստում էշի վերայ։ Սատանան՝ անկարող լինելով տոկալ տղայոց ծանրութեան, քանիցս չոքում է և վեր կենում։ Վերջապէս տեսնում է որ խիստ դժուարութեան մէջ է, ասում է. «Շատ խոնարհու-

թիւնն էլ մի բան չէ». ցցում է պոչը, զլում զռզռոցը, վազելով նստում է խոր ջրում և կոտորում աշակերտները խեղդելով։

43.

Մի անգամ հիւանդանում է Մէլիքն և հրամայում Պուղուն, որ զուարճացնէ զինքը։

—Մէլիք, Մովսէս մարգարէն շատ ուրախանում է Աստուածանից, որ երեք օր աստուածութիւն տայ իրան։ Աստուած ասում է. «Աստուածութիւնն դժուար է, մարդի գործ չէ»։ Դարձեալ շատ որ խնդրում է, Աստուած ասում է. «Մին ժամ աստուածութիւն տուի քեզ»։ Մին ժամում Մովսէս մարգարէն թափում հեղեղ, կարկուտ, կայծակ, մանտաղաժամ և կործանում Եգիպտոսը։ Աստուած յետ է առնում աստուածութիւնը և ասում. «Մովսէս, Մովսէս, դու մին ժամում որ կործանեցիր ամբողջ Եգիպտոսը, եթէ երեք օր աստուածութիւն տայի, էլ աշխարհում ոչ ոք չէր մնալ»։

44.

Մին մարդ շատ աղաչում է Քրիստոսին՝ ասելով. «Տէր, շատ խնդրում եմ որ ինձ տաս քարոզելու շնորհք և իրաւունք»։ Տէրն տալիս է շնորհքը և իրաւունքը, պատուիրելով որ ամենևին չհամարձակուի խառնուիլ իրան չվերաբերեալ գործերի մէջ։ Մարդն գնում է քարոզելու, բայց դեռ չքարոզած, տեսնում է ճանապարհի վերայ մի ահագին քար. ասում է ինքն իրան. Քրիստոս իրաւունք և իշխանութիւն տուած է ինձ. այս քարին մին շունչ փչեմ, տեսնամ, ինչ կը դառնայ։ Շունչ փչածին պէս քարն դառնում է մի ահագին, սարսափելի գազան և ուզում է կլանել իւր շունչ փչողը։ Մարդն վա՜յ, վայ անելով ասում է. «Ծառայ եմ քեզ, Քրիստոս, հասիր, ինձ ազատիր»։ Քրիստոս հասնում է իսկոյն և խաչակնքում, կրկին քար է դառնում գազանն, և ասում է.—Այ մարդ, ես քեզ ուղարկեցի որ ժողովուրդին քարոզ տաս, թէ ինչ տեղ մեծ քար տեսնաս, գազան չինես։ Դու որ չես կարողանում քո ստեղծած Ջանավարին

առաջ կանգնես, վայ վայ ես անում, ժողովուրդն ինչպէս կանգնելու է։ Դէ գնա քո գործին, ես քեզ տուի քարոզելու շնորհք և ոչ թէ աստուածութեան շնորհք։

45.

Մին մարդ էլ 10 տարի շարունակ աղօթում է, աղաչում, պաղատում, ասում. Աստուած, քեզանից հազար մանէթ եմ ուզում ես. տափի տակից տուր, ուզում ես լակլակի ընից տուր, որ տեղից որ ուզում ես, վերջապէս տուր։ Տասն տարին անցնելուց յետոյ մարդն հիւանդանում է, մի թունդ լուծողական խմում։ Երբ շատ լուծում է, մտնում է թոխմաշարին (թթենիներ, որի տերևները կոտորում են և տալիս մետաքսի որդին) մէջ, կախւում մին թթենուց. զոռում է լուծողականն, արմատախիլ պուք է գալիս թթենին, ընկնում է մարդն ապակտնութեան վերայ, բայց տեսնում է որ փողերն գլորուած թափուում են։ Ձեռ ասիլ, հնուց ճիշտ հազար մանէթ փող մի ամանով թաղուած ծառին տակ։ Մարդն

շնչասպառ ասում է ընկած տեղից. «Աստուած, շնորհակալ եմ, ուզածս տուիր, բայց այս հալս ձգեցիր, յետոյ տուիր։

46.

Մին ճգնաւոր իւր պահապան հրեշտակից խնդրում է ցոյց տալ աշխարհիս ամենամեղաւոր և ամենասրդաը հայ մարդը։

Մի առաւօտ մի գիւղի մօտ ցոյց տալով ասում է հրեշտակն, «Տեսնում ես այս մարդը, սա է ամենամեղաւորն, երեկոյին էլ նոյն հրեշտակն նոյն ճգնաւորին ցոյց է տալիս միևնոյն մարդը՝ ասելով. Սա է ամենասրդաը մարդն»։

Զարմանում, ափշում է ճգնաւորն և ինքն իրան ասում. «Երեսուն տարի է որ ես ճգնել եմ անտանելի ճգնութեամբ և չորակերութեամբ. այս ինչպէս բան է որ միևնոյն աւուր մէջ թէ ամենամեղաւորն էր և թէ ամենասրդարն մի և նոյն մարդն»։ Շատ հետաքրքրուելով գնում է, հիւր լինում այն մարդին և առանձին հարցնում. «Դու այսօր ինչ ես արել, պատմիր ինձ»։—«Առաւօտեան փոքր որդուս հետ գնացինք անդն գործով.

որդիս հարցրուց ինձ. «Հայր, այս ի՞նչ շատ աւազ է»։ Պատասխանեցի.—«Որդի, իմ մեղքերն այս աւազից աւելի շատ են»։ Որդիս սկսաւ լալ, ես էլ լացի, վերջապէս երկուքս էլ չափազանց լացինք. այս է բոլոր եղածն»։ Ինքն իրան ասում է ճգնաւորն, «Այն ատիճան զօրաւոր է ճշմարիտ զղջումն, որ բոլորովին արդարացնում է ամենամեղաւորը[1])»։

47.

Պուղին տեսնելով որ մի բարիկենդանի շատ ուրախութիւններ են անում նուագածուաց խմբով, ինքն ևս հինգշաբթի օրում հրաւիրում է նոյն խումբը իւր տունն և անում ուրախութիւն։ Հաւաքուում են ժողովուրդն, գալիս է և Մէլիքն և հարցնում.
—Ադա Պուղի, էս ինչ հարսանիք է, դու ոչ հասած տղայ ունես և ոչ հասած աղջիկ։

—Մէլիք, բարիկենդան է, ամեն տան

1) Ձկարողացանք իմանալ թէ ինչ նպատակաւ ասած է մեր խմաստասէրն այս հատուածը. արդեօք մէլիքը զղջման հրաւիրելու։

զուռնա են ածում, պար գալիս, եօթն շաբաթ պաս պէտք է պահենք։ Մէլիք, բարով, հաղար բարի ես եկել, տունս տեղս քեզ փեշքեշ, դէ բերել տուր մին կարաս գինի, 400 հատ լաւաշ հաց, 2 արջառ, 4 ոչխար, 5 լաք բրինձ, մին լաւ բարեկենդան անենք, թէ հարսանիք կը լինի և թէ պսակ։ Մէլիքն Պուղու սիրոյն համար կատարում է ամենը։

48.

Պուղին, որպէս թէ Մէլիքի կողմից հրաւիրում է ճաշի Վարանդայ գաւառի ամեն քահանաները։ Հետևեալ օրն, անառակի կիւրակէ կէսօրին մօտ՝երը քահանայք լցուում են Մէլիքարան, հարցնում է գործից անտեղեակ Մէլիքն։

—Պուղի, այս տէրտէրներն ինչի համար են եկել։

—Մէլիքն ապրած կենայ, այսօր Անառակ որդու տօնն չէ։

—Այո, Անառակի տօնն է։

—Եկել են տօնդ շնորհաւորելու։

49.

Սաստիկ բարկանում է Մէլիքն իւր զուարճաբանի վերայ, երկու օր ոչ հաց կը տայ և ոչ կերակուր, որ խրատուի։ Երկու ամսից յետոյ Պուղին մեծ պատրաստութիւն է տեսնում Մէլիքի այգու մի անկիւնումն։ Մէլիքը հրաւիրում է ճաշի ասելով.—Այսօր լաւ քեֆ անելու ենք ձեր այգումն. ամեն ինչ պատրաստ է, երկար ուտիս (յինանց օրեր), դառներն մորթուած, չորս կողմ կանաչած, ծլած և ծաղկած, թռչուններն ծըլվլալիս, փլաւն քամած, քեֆ եմ ասում հա։ Կէսօրին գալիս է Մէլիքն և ուրիշ հիւր, ածում են սազանդէրն, եռանդով պարում է Պուղին։ Ասում է Մէլիքն.—Պուղի, սեղանը պատրաստել տուր, կէսօրն անց է։

—Այս րոպէիս, աղա։

—Պուղի, կէսօրից էլ անց է 2 ժամ, դէ, շուտ արա։

—Մէլիքն ապրած կենայ, համբերութիւնն կեանք է, մի փոքր էլ համբերեցէք։

—Ա. պլըկատար, կէսօրից էլ 4 ժամ անց է, ինչ եղաւ։

—Աղա, բա երկու օր ինչպէս սոված, ծարաւ մնացի ես և համբերեցի։

Հրաւիրեալներն առանց ճաշի հեռացան։

50.

Դանձակ է գնում Մէլիք-Շահնազարն իւր զուարճաբանի հետ, ուր հայերն լսելով Պուղու մասին, հաւաքուում են, հարցեր տալիս և ուզում պատասխան։

—Պուղի, ինչից է որ շուտ շուտ թանկանում է միսն մեր քաղաքում։ Պատասխանում է Պուղին.—Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ.—աղ ձեռնի բթամատը եւ ցուցամատը իրար քսելով։

—Խնդրում ենք, որ պարզէք այդ խօսքը։

—Այ օրհնուած մարդիկ, ամեն բան պարզ ասուում է, որ պարզեմ. Մսագործներն խօսք մին են անում, խանին կաշառում և թանկացնում միսը։

51.

—Մեր խանն բռնել է տալիս գողերը, պահում մի քանի օր և արձակում անպատիժ. ինչ է պատճառն։

—Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

52.

—Խանն մի քանի մարդասպան թուրք բէկեր բանտարկել էր տուել կախելու, բայց երեք ամսից յետոյ արձակեց պատուով անպատիժ։

—Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

53.

—Մեծ դժուարութեամբ բռնեցին և բանտարկեցին չորս մարդասպան գողեր, որք սպանել էին չորս անմեղ հայ և թուրք և քանդել էին շատ տուներ։ Մունետիկն երեք օր միմեանց վերայ յայտարարեց թէ ուրբաթ օրն կէսօրին պիտի կախուին մեծ կա-

զամախի (չինարի) ծառից այս ինչ, այս ինչ անուն մարդասպան աւազակներն – Մհամատ, Օսման, Իբրահիմ և Մուստաֆան.—ով որ ցանկանում է, դայ թամաշի։ Որոշեալ ուրբաթ օրում խանից պարգևատրուելով արձակուում են ազատ...։

—Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

54.

Պուղի, քեզ մատաղ, մենք աղքատ մարդիկ ենք, մենք գիտենք, որ արեգակի պէս անմեղ և արդար ենք և մերն է իրաւունքն։ Սակայն հարուստներն՝ միշտ արդարանալով դատարանում՝ մաքուր ձէթի նման դուրս են գալիս ջրի երեսն՝ թէ և յանցաւոր։ Այս ինչ՞ն է։

—Սովաւ արդարասցուք յամենայն յանցանաց։

—Մենք անգրագէտ մարդիկ ենք, պարզ ասա, որ իմանանք։

—Ինչ տեղ խօսում է դրամն, իւրն է իրաւունքն. ինչ տեղ ձայն է հանում ոսկին, կատարում են նորա հրամանը. վճիռ տուողն ոսկին է և ոչ թէ դատաւորն։

55.

Պուղի, հարուստների աղջիկները դեռ փոքր՝ պակում են, տանում. իսկ մեր հրեշտակի նման գեղեցիկ, համեստ, տնարար, աշխատասէր աղջիկներն մեծանում են և մնում մեր տան մէջ։ Ի՞նչ է պատճառն։

—Պատճառն էլի փողն է փողն. հարուստների աղջիկներն թէ և տգեղ լինին, թէ և պակասաւոր էլ լինին. այսու ամենայնիւ տանում են փողի համար, միայն փողի համար...։

56.

Մէլիքն դառնում է Գանձակից, դիտամամբ թողում է Պուղին յորդած Թարթառ գետի ձախ ափին և ինքն իւր մարդիկներով անցնում գետից ձիերով։ Երբ հասնում է Աւետարանոց, զարմացմամբ կոչում է.—Պուղի, այ տղայ, դու ինչպէս անցար գետովը, երբ եկիր և հասար տուն, այ սատանայ։

—Աղա, դու ինձ անտէր և անօգնական թողիր. Աստուած տիրութիւն արաւ և ինձ օգնելով քեզանից էլ առաջ բերաւ։

57.

Մէլիքն, խիստ ձանձրացած իւր խենդ եղբօր արարմունքից, որ միշտ անպատուում էր հարևանները, յաճախակի ասում էր բարձր ձայնով.

—Այս փչացածն չմեռաւ որ պրծնէինք. մի կատաղած օձ չկծեց (խածնել), որ ինքն էլ հանգստանայ, մենք էլ, հարևաններն էլ, որոց հանգստութիւնը միշտ խանգարում է։

Պուղին, որ ամեն օր լսում է Մէլիքի տրտունջները, առնում է նորա խենդ եղբայրը և տանում Սմարաս ուխտի։ Ուխտ անելուց յետոյ ասում է խենդին. «Այս տեղ մեծ մեծ օձեր շատ կան, թովչութիւն տամ քեզ, եթէ խածնեն էլ, չվնասուես»։ Որպէս թէ տալիս է թովչութիւն. խենդն վազում է, որ բռնէ մի մեծ օձ, որից թունաւորուելով մեռնում է իսկոյն։

—Ա. շան տղայ, բարկացած գոչում է Պուղու վերայ Մէլիքն, դու օֆսունչի (թովիչ) էիր, որ եղբայրս տարար, խաբեցիր, սպանեցիր։

—Աղա, ամեն օր անիծելով ասում էիր. մին կատաղած օձ էլ չեղաւ, որ խածնէր,

սպանէր, ինքն էլ հանդստանար, մենք էլ, հարևաններն էլ։ Դէ մեռաւ, պրծաւ. շնորհակալ լինելու տեղ, էլ ինչ ես նեղանում։

58.

Նորընծայ քահանան Մէլիքի եղբօր եկեղեցու կարգը կատարելու ժամանակ շատ կըզկըզում և տեղ տեղ էլ դէմ ընկնելով կարդում է մաշտոցը. Պուղին ասում է լուսարարին.

—Մի քիչ բամբակ թաթախիր կանթեղի ձէթի մէջ, բեր քսիր նորընծայի աչքերը, որ լուսաւորուի և լաւ կարդայ։

59.

Միհնոյն նորընծան իւղաբերից աւետարանը կարդալու ժամանակ քանիցս կըրկնում է՝ «ասէ ցնա», մի պառաւ իմանալու փափագով հարցնում է.—Ի՞նչ է ասում, քեզ մատաղ, ա տեր, ինչ է ասում։

—Ձենդ կորիր պառաւ, ասում է Պուղին, տէրտէրն քառասունքից նոր դուրս եկած է, ինքն գիտէ թէ ինչ է ասում Քրիստոս, որ քեզ էլ հասկացնի։

60.

Մի ուրիշ քահանայ ևս խիստ դժուարաւ էր կարդում աւետարանը և դիրքը, շուտ շուտ բարկանում էր մոմակալ երեխայոց վերայ, ասելով, «Այսպէս բռնի, այնպէս բռնի»։ Պուղին ասում է.

—Տէր հայր, զուր տեղ մի բարկանար այդ երախայոց վերայ, եթէ Մէլիքի դէզերը ևս վառեն առաջիդ, դարձեալ այդպէս պիտի կարդաս։

61.

Մի խնջոյքում հրաւիրելոց մին, որ գինին շատ խմած ժամանակ մեծ քիթն կարմրում էր, մտենում է, առանձին ասում Պուղուն,—խնդրեմ ա՛ռ այս 15 կոպեկը, քթիս վերայ չիսուես, որ հանդիստ գինի խմեմ։—Լաւ, չեմ խոսիլ, միամիտ կաց։ Պուղին երբ տեսնում է որ լաւ խմելուց չափազանց կարմրած է քիթն, հանում 15 կոպեկը և հանդիսականաց առաջ նետում դէպի տուղն ասելով.

—Մարտի, ա՛ռ քո կաշառ տուած 15

կոպեկը. բթիդ հալն հալ չէ, այլ ես չեմ կարող համբերել։

62.

Պուղու տան մէջ գինի էին խմում բաւական մարդիկ, որք կոչում են միաբերան.

—Այս շան տղու տղայ Պուղու գինին ինչ լաւ գինի է։ Պուղին ես մի գաւաթ խմելով գոչում է.

—Այս շան տղու տղէքս ինչպէս լաւ գինի են ճանաչում, ղորդ որ լաւ գինի է։

63.

Մէլիքն ընթրում էր, Պուղին էլ սաստիկ անօթի կանգնած էր։

—Պուղի, ինչպէս լաւ և համով է լինում, երբ ուտում ես փլաւը փասեանի մսով և վերան խմում Սմարասի գինին։

—Մէլիք, սոված փորս վեց վեց է անում. այդ փասհանն թէ այդ փլաւին գլխին և թէ Շխերին ձորումն (փասեանը որսացած տեղի անունն է) քանի որ ես սոված եմ, ինձ ինչ օգուտ։

64.

Ճաշում էր Մէլիքն, բայց թողած կաքաւի և փասեանի փափուկ մսերը, կրծում էր ախորժակով ոսկորները։ Մի գիւղացի ցած ձայնով ասում է.

—Բեղ մատաղ, Պուղի, Մէլիքն ինչ պատճառով փափուկ մսերը թողած՝ կրծում է ոսկորները։

—Մեծամեծ մարդիկ ոսկոր կրծած (կաշառ առած) սովոր են լինում, այն պատճառաւ Մէլիքն սիրում է ոսկրները։

65.

Մի գանգատաւոր բողոքում էր Մէլիքին ասելով.—Ես նշանուել եմ Թիւնի (Ցարութիւն) ապօր փոքր աղջկան հետ, բայց պսակել տուին ինձ հետ մեծ աղջիկը։—Պսակելիս ինչի չնայեցիր երեսին, ադա, այդ հոգևոր գործ է. պէտք է գնաս առաջնորդին։

—Մէլիքն ապրած կենայ. երեսը թանձր քօղով պինդ ծածկել էին, ես էլ ամաչեցի նայել։ Միջամտում է Պուղին.

—Ադա Մուքի (Միքայէլ), ես իմ Ստեղծողն, (Աստուած վկայ) լաւն հենց այդ է, սիրուն հարսին թշնամին շատ է լինում. իսկ որովհետև հարսիդ երեսն չիշոտ է, բայի քեզանից ուրիշ ոչ ոք չսիրէր. պատիւդ էլ տեղն կը մնայ, բնաւ չես ունենար ոչ կասկած և ոչ երկիւղ։ Մարդն համոզուում է, այլ ևս չէ արձակում իւր հարսը։

66.

Մէլիքի կողմից ներկայանում է Պուղին Թաւրիզում Պարսից հոգևոր դլխին, որ քաշում էր կլկլակ (նառկիլէ) Պուղին յանդիմանուում է Շէյխ-Իսլամից իբրև չափազանց շուտ շուտ խօսող։ Գալիս է սպասաւորն, վեր առնում կլկլակը և դնում ռաֆի վերայ և հեռանում։ Տեսնում է Պուղին, որ կլկլակի գլխից ընկաւ Շէյխ-Իսլամի ամենաթանկագին շալ փաթաթոցի վերայ կրակ և սկսում է այրել, ամենածանր եղանակով ասում է Պուղին. «Երկնքից մի կրակ ընկաւ Շէյխ-Իսլամի գլխի խորասանի շալի վերայ. Խորասանի շալն այրեց, այրեց, այրեց»։

Շէյխ-Իսլամն, զգալով որ տաքացաւ

գլուխն և շատացաւ անախորժ խնձրմահոտն, իսկոյն առնելով գլխի փաթաթոցը նետում է բուխարու մէջ և Պուղու վերայ գայրացած ասում. «Մարդ Աստուծոյ, ինչի՞ շուտ շուտ չասացիք, որ չայրուէր շալս»։—Սուրբ մարդ, դուք հրամայեցիք ինձ ծանր ծանր խօսիլ, մանաւանդ վախեցայ որ շուտ շուտ խօսելով կրկին կը յանդիմանուիմ ձեր սրբութիւնից։

67.

Թաւրիզ քաղաքի պարսիկ հոգևորականներն հաւաքուում են Պուղու մօտ և ասում.

—Հայերն ինչ պատճառաւ թողած Մուհէմմատը՝ պաշտում են Քրիստոսը։

—Այն պատճառաւ, որ Քրիստոս Աստուած է, իսկ Մուհէմմատն մարդ։

—Ի՞նչ փաստով կարող ես հաստատել Քրիստոսի աստուածութիւնը։

—Նոյն իսկ ձեր զուրանի փաստով, որի մէջ Մուհէմմատ վկայում է. «Քրիստոս յարութիւն առաւ և երկինք համբարձաւ»։

Բայց որովհետև Մուհէմմատն սոսկ մարդ էր, նորա մարմինն մնաց աշխարհումս։

68.

Մի քանի պարսիկներ հարցնում են Պուղուն։

—Մեր հոգևորականներին հարցանում ենք թէ ինչ է պատճառն որ մեր Մուհէմմատ մարգարէն արգելած է մահմէտականաց չխմել գինի, արաղ և ոգելից ըմպելիքներ։ Նոքա միայն ասում են. «Արգելուած է, հարկաւ լաւ արած է» բայց չգիտեն բուն պատճառը։

—Ձեր մարգարէն փորձով գիտէր որ Արաբ և Թուրք ցեղերն առանց գինի խմելու էլ անում են շատ անկարգութիւն, մարդասպանութիւն և շնութիւն։ Եթէ ոգելից և արբեցուցիչ հեղուկներ ևս խմելու լինէին, չկարողանալով պահել, այլ բոլորովին կը դառնային հրեշներ և կը կոտորէին մէկզմէկ։ Ահա այս է պատճառն, որ արգիլած է։

69.

Պուղին Աւետարանոց դարձած ժամանակ տեսնում է մի Թեհրանցի Թուրք, որ

իւր ձին Մէլիքին ծախելու համար չափազանց գովում էր։

—Ահմատ, Շահն էլ տեսաւ ձիդ, հարցնում է Պուղին։

—Այո, Շահն էլ տեսաւ ձիս շահզատանէրն էլ։

—Ուրեմն եթէ ձիդ գովածիդ չափ լաւ է, ինչ պատճառաւ Թեհրանից մինչև այս տեղ չծախուեցաւ։—Ձին դարձեալ մնում է անծախ։

70.

Մի պարտատէր յաճախակի գալիս էր և ձանձրացնելով ասում.

—Մէլիքն ապրած կենայ, Բաղոնց Սաղին 12 մանէթ դրամ փոխ առաւ ինձանից. ինքն վախճանուել է, որդիքն էլ աղքատ են, չեն տալիս իւրեանց հօր պարտքը։ Մէլիքն դատաստանը յանձնում է իւր զուարճաբանին։

Պուղին, իւր ձեռնում բռնած մի գլուած թուղթ, գնում է եկեղեցի փոխատուին հետ, թուղթը զետեղում է մի նոր ննջեցեալին աջ ձեռնում բարձրաձայն ասելով.—Մոսի (Մով-

սէս) ապեր, ես գիտեմ որ դու վաղն հասնելու ես Արքայութիւն, այս նամակը այնտեղ յանձնես Սադի ապօր, ասես որ Պուղին խնդրում է քեզանից, որ անմինչապէս ուղարկես Մարտուն 12 մանէթը, որպէս զի ինքն էլ ազատուի Մարտուն ձեռքան, մենք էլ։

71.

Մի մարդ սատիկ թախանձում է, որ Պուղին կնքահայր լինի իւր նորածին մանկան։—Վանէս, (Յովհաննէս) Աստուած վկայ, ես էլ իմ մանուկները ուրիշին եմ գրկել տալիս, պատասխանում է Պուղին։

72.

Մի շատ խելօք և ուսեալ կարծուած մարդ, որ ընկերացել էր Պուղուն, խեղդուում է Երասխում լողանալիս։ Պուղին, նստած գետեզերքում մի երկար ձողով խառնում է ջուրը։ Հարցնում է մի անցորդ.

—Ինչի՞ ես ման գալիս, ա Պուղ։

—Մին շատ խելօք մարդի։

—Ցամաքի վերայեն ապրում խելօքներն։

—Մեր ժամանակի խելօքներն ապրում են ջրերում։

73.

Մի ուրիշ մարդ, որ առաջին անգամն էր տեսնում Երասխը, հարցնում է Պուղուն.

—Ի՞նչ պատճառաւ չէ վշվշում այս գետն։

—Մլաւան կատուն մուկ չէ բռնում։ երբ մլաւում են կատուներն, փախչում են մկներն։ Երասխն էլ չէ վշշում, որ մարդ բռնէ, կլանէ։

74.

—Արդեօք շատ խոր է Երասխն։

—Մտիր մէջն և փորձիր, տես խոր է թէ երես։

75.

—Երևի թէ այսօր գինձ ես կերել որ խելքդ պակասել է։—Պատասխանում է Պուղին.—Այնպէս երևում է որ շատ գինձ ուտելով կորցրել ես խելքդ. գնա և այսուհետև կեր ջրբկուտեմ (ջրի կուտեմ.) որ յետ գայ պակասած խելքդ։

76.

—Խելքիցդ մին քիչ ինձ փոխ տա՝, ինչ կլինի։

—Ողորմած հոգի հայրդ էլ... փոխ առաւ, չկարողացաւ պարտքը տալ, պարտական մեռաւ։

77.

Դարձեալ հիւանդանում է Մէլիքն, հրամայում է, որ Պուղին ծիծաղացնէ զինքը։ Պուղին բերում է ս. գիրքը։ Մէլիքն ասում է.

—Պուղի. կարծես թէ Աստուածաշունչը առաջն դրած, տիրացուներին օրէնք սովորցնող եպիսկոպոս լինիս։

—Մէլիք, քեզ նման տիրացուին՝ ինձ նման եպիսկոպոսն շատ է, որ քիչ չէ։

78.

Մէլիք, մի եպիսկոպոս քննում է մի տիրացու, որին հարցնում է.—Տիրացու, Քրիստոս քանի՞ տարի մնաց այս աշխարհում։—Ծառայ եմ սուրբազան—Ո՞ր Քրիստոսն ես հարցանում։

—Օրնուած տղայ, քանի՞ Քրիստոս կայ. Քրիստոս մէկ է. չկայ ուրիշն։

79.

Մէլիք, մի քահանայ, հարսանիքի համար ամեն ինչ պատրաստած տուն գնալիս, ցեխ-ձորում ընկնում է աւազակների ձեռքն, մերկացնում են Ադամի նման. թողում հագին մի հալաւ և մի փոխան։ Քահանան աղաչում է որ թողնեն հալաւը և փոխանը։ «Չէ, անկարելի է. հանիր, շատ մի խօսիլ»—ասում են մարդասպան գողերն։—Քահանան մաքով խառնում է Ս. Գիրքը. որի մէջ հրամայել է Քրիստոս. «Եթէ բաճկոնդ ուզեն, շապիկդ էլ տուր»։ Բայց փոխանին համար ոչինչ չկայ Նոր Կտակարանում. դարձեալ ընկնում է այժմ էլ Հին Կտակարանի մէջ. իսկոյն միտքն է գալիս Դաւիթ մարգարէի այս խօսքն. «Ընդ սրբոյն սուրբ եղիցիս, ընդ առն ամբծի անբիծ եղիցիս, ընդ ընտրեալն ընտրեալ եղիցիս և զթիւրսն կործանեսցես». յետոյ ասում է. «Ա. գողեր. կարդաւոր մարդ եմ, այս փոխանը թողէք մնայ»։ «Չէ, հանիր, հանիր»։ Քահանան տեսնում է որ չեն

թողում, իսկոյն վեր է առնում մի ահագին ձողի, մի բոպէի մէջ սպանում չորս գողերը, հագնում իւր զգեստը և ձիերը միմեանց ետևից կապած տանում իւր տունն։ Երիցակինն ուրախութեամբ ասում է. «Փառք քեզ Քրիստոս, երէցս մի ձիով գնաց քաղաք, հինգ ձիով է գալիս»։ Ասում է տէրտէրն.—Է՛յ իրիցկին, գնա Դաւիթ մարգարէից չնորհակալ եղիր. եթէ բանն Քրիստոսին մնար, զիս մերկ տեսնելու էիր։

80.

Մի մարդ գնում է մի աւանակ, բանեցնում 4 տարի: Մի օր քաղաք գնալիս նստում է մի ծառի շուքում և քնանում, ծառից կապելով աւանակը։ Երբ զարթնում է քնից, տեսնում է որ աւանակի տեղ մի երիտասարդ կապուած կապից։ «Այ աւանակ, այս ինչպէս եղաւ որ մարդ դառար» հարցնում է տէրն էշին։

—«Իմ բարի տէրս, ես մի քահանայի որդի եմ, սաստիկ վշտացրի հօրս սիրտը, անիծեց որ աւանակ դառնամ հինգ տարի ժամանակաւ. երբ դու քնացար, այն ըո-

պէին լրացաւ հինգ տարին, էլի մարդ դարձայ։

—Ազատեցի քեզ, վեր կաց գնա և հօրդ հնազանդ կաց։

81.

Մարդն քաղաքն մտնելիս աչք է ածում որ գնէ մի աւանակ, տեսնում է որ գողացող գողերն ծախում են իւր աւանակը, որ իւր տէրը տեսածին պէս մօտենում է և քծնում, զգզում և ուրախութիւն անում։ Տէրն ասում է աւանակին. «Ա. պել չան տղայ, չկարողացար մի օր մարդ դարձած մնալ, էլի հօրդ սիրտը վշտացրիր, որ քեզ անիծեց աւանակ չինեց, ուզում ես որ կրկին դրամ տամ, քեզ գնեմ, որ էլի մարդ դառնաս, կորչի փողերս»։ Ոչ տեսանես Եգիպտոս։

82.

Պլը-Պուղի, հերիք է։

—Մէլիք, քիչ մնաց, պրծնում եմ։ Մին նորընծայ քահանայ իւր ջնան լցնում է 50 բակլայ մեծ պասին. օրական թող է անում

մի բակլայ, որ Զատիկը չկորցնէ։ Երիցակինն մի օր ջեպը կարկատելու ժամանակ տեսնում է բակլան և ինքն իրան ասում. «Երկու աչքս կուրանայ, Նորընծաս բակլայով է ծոմ պահում». բերում է և լցնում ջեպն երկու բուռն բակլայ էլ։ Նորընծան կրկին ամեն օր նետում է մի բակլայ, բայց չէ վերջանում։ Ասում է ժողովուրդն. «Նորընծայ, ամեն գիւղերում Զատիկ են արել, ճրբ լինելու է մեր Զատիկն»։ Ասում է Նորընծան. «Եթէ իմ բակլայի հաշուին նայենք, այս տարի Զատիկ չկայ ձեզ համար։

83.

Մէլիք, մի երիտասարդ Թեհրանում վեց տարի մնալուց վերջն գալիս է տուն. հարցնում է հայրն. Բադի (Բաղդասար) փարսի սովորել ես»։—Ապեր, սովորել եմ։

—Ուզին ինչ են ասում։—Այդպէս մեծ մեծ բաներ ես չեմ սովորել։

—Մրջիւնին ինչ են ասում։—Այդպէս փոքր բաներ չեմ սովորել։

—Գլխին.—սար են ասում.

—Պարանոցին.—սրակոթ.

—Մազերին—սրախոտ.

—Մօրուքին—սարաւել.

—Ընչացքին (պեղեր)—սարաագի.

—Բերանին—սարածակ.

—Աչքերին—սարալուսամուտ.

—Ականջներին—սարապատուհան.

—Քթին—սարնով.

—Որդի, ես չեմ գնացել Պարսկաստան, բայց ես էլ գիտեմ այդպէս փարսի։—Ուրեմն, ապեր,

—Կրիային ինչ են ասում.—Սուտամ կեօլա.

—Գորտին.—լոքտամ կեօլա.

—Խլեզնին.—շոռտամ քօլա։

84.

Երեք կարդացող գնում են միասին, ապա անօթանում են։ Շատ աշխատում են գտնել ուտելիք, գտնում են միայն մի ձու։ Պայմանաւորում են ով որ լաւ բան կասէ. նա ուտէ ձուն։ Երեքից առաջինն իւր կողն քաշելով ձուն՝ ասում է.

—«Ղազարէ արի եկ արտաքս»։ Երկրորդն կեղևում է ասելով.

—«Լուծէք զդա և թողէք երթալ»։ Երրորդն էլ ասում է.

«Մուտ յուրախութիւն տեառն քո» և ձուն ուտում։

85.

Միասին ճանապարհ են գնում մի հայ քահանայ, մի հրէա խախամ և մի թուրք մոլլա և երեքն էլ հիւր լինում մի տան։ Տան տէրն բերում է մի աման փլաւ։ «Հաղիւ մի մարդ կշտացնէ փլաւս, եկէք քնանք. արթնցած ժամանակ ով որ լաւ երազ տեսած կը լինի, կը պատմէ, նա ուտէ փլաւը»։ Համաձայնում են։ Երբ քնանում են խախամն ու մոլլան, քահանան ուտում է փլաւը և քնանում։ Առաւօտեան պատմում է խախամն. «Գնացի երազումս Մովսէս մարգարէի նկարագրած դրախտն և կերայ այնպիսի պտուղներ և խմեցի այնպիսի անմահական ըմպելիքներ, որ անկարելի է պատմել բերանով»։ Ասում է թուրքն. «Երազիս գնացի Մուհամմատի դրախտն, կերայ փլաւ, ինչ տեսակ շարբաթ, ինչ հուրի՛, փերի՛, ղալեան...»։ Քահանան ասում է. «Երազումս

տեսայ, որ ձեզանից մին գնացել է Մովսէսի դրախտն, միւսն էլ Մուհամմատի, այս տեղ միայն մնացել եմ ես, կերայ փլաւը»։

86.

Մի հիւսն, մի դերձակ և մի վարդապետ միասին գնում են ճանապարհ. մթնում է այնպիսի մի տեղ, ուր հարկ է լինում ընկերից մին արթուն հսկել։ Քնանում են վարդապետն և դերձակն, իսկ հիւսն (խառատն) չլինում է մի փայտեայ մարդ. ապա արթնացնում է դերձակը և քնանում ինքն։ Դերձակն էլ կարում է լաւ հագուստ և հագցնում փայտեայ մարդին, ապա զարթեցնում է վարդապետը և քնանում ինքն։ Վարդապետն երբ տեսնում է, որ փայտեայ մարդի ամեն ինչն պատրաստ է, պակաս է միայն հոգին, չոքում և ազի արտասուքներ թափելով աղօթում և ասում. «Ո՛վ սուրբ Հոգի Աստուած, հիւսն ցոյց տուաւ իւր շնորհքը, դերձակն էլ իւր շնորհքը. այժմ կարդն իմս է, որ ես էլ ցոյց տամ իմ շնորհքը։ «Ուրեմն Ո՛վ Հոգիդ Սուրբ Աստուած, փչիր այս փայտին մի հոգի, որպէս

զի փառաւորուի Քո Աստուածութիւնն և պարգևես մնամ ընկերնիս մօտ»։ Իսկոյն կենդանանում է փայտեայ մարդն։

87.

Պուղին գնում է Ամարաս, կաթուղիկոսից առնում մի կոնդակ, որ գնայ ժողովարարութիւն անէ։ Կաթուղիկոսն ստորագրելուց յետոյ, ասում է Պուղին.

—Հոգևոր Տէր, մին կարդա, ծառադ եմ։

—Պուղի, լաւ եմ գրել տուել, ապահով եղիր։

—Նատ խնդրում եմ, թող մին կարդայ գրագիրն։ Ընթերցումը վերջացնելուց յետոյ, ասում է Պուղին.

—Արդարև շատ լաւ գրուած է. դէ մի ողորմութիւն ցնծա, Հոգևոր Տէր։

—Ագա, ինչ ողորմութիւն, կոնդակը տուին, վեր առ և գնա։

—Հոգևոր Տէր, Դու որ քո տուած կոնդակը չես յարգում, ողորմութիւն չես շնորհում, ժողովուրդն ինաւ չ.յարգեր և ողորմութիւն չտար։ Վերջապէս իւր տուած կոնդակը յարգելու համար ստիպուում է կաթուղիկոսն ողորմութիւն տալ։

88.

Մի օր ժամերգութիւնն վերջանալուց յետոյ Մէլիքն շատ է նայում մի նոր օծուած Աստուածածնայ պատկերի վերայ, ապա հարցնում.

Պուղի, որ կողմից էլ որ նայում եմ, պատկերն էլ ինձ է նայում։

—Մէլիքն ապրած կենայ, դու էլ այդ պատկերի նման պէտք է լինիս, ամեն ժամանակ, ամեն կողմից պէտք է Հայոց ազգի վերայ պահես աչքդ, սիրտդ, միտքդ և հոգիդ։

89.

Մի օր Պուղին ասում է.

—Ա. կնիկ, ծմակումն տեսել եմ լաւ, համեղ տանձ. տուր ինձ մի չուալ որ գնամ, լցնեմ, բերեմ։

Ծողովում է տանձը, լցնում չուալը, դառնում աղբիւրի մօտ, ուտում հացը և սկսում քաղցր քնանալ։ Դալիս է մի վարպետորդի, իւր հաւաքած թթու սալորը փոխադրում Պուղու չուալի մէջ և տանձը՝ իւր չուալի մէջ. նախկին շինածի պէս շինում Պուղու չուալի բերանը և հեռանում առ-

նելով իւր չուալը։ Հասնում է տուն Պուղին և ասում, այ կնիկ, մի տանձ եմ բերել, մի տանձ եմ բերել, որ գնում ես բերանումդ, հալուում է շաքարի նման։

Կինն, բանալով չուալի տերևները, տեսնում է, որ թթու սալոր է բերածն, կոչում է. «Աստուած թակի քո խասիաթդ, ա մարդ, թթու, զռզռան սալորը բերել ես, ասում ես տանձ եմ բերել։

Այս անսպասելի փոփոխութիւնը տեսնելով զարմացմամբ կոչում է Պուղին.—Ա. կնիկ, ողորմի հօրդ, մի լաւ նայիր, և տես, ես Պուղին եմ։

—Այո, իմ մարդ Պուղին ես։

—Ա. կնիկ, եթէ ես Պուղին եմ, տանձ եմ ժողովել և ոչ սալոր։

90.

—Պուղի, առաւօտ չուտ դաս, յղելու եմ քեզ Դանձակ։

Պուղին կէսօրին կերևի Մէլիքին, վերջինս ասում է.

—Ադա, չասացի՞ քեզ որ չուտ դաս, յղելու եմ Դանձակ։

—Մէլիք, Դանձակ եմ գնացել և եկել։

—Նամակ կար, պէտք է տանէիր։

—Պուղին եմ, մէկ էլ եմ գնում, տուր նամակը։

Կրկին միևնոյն օրում գնում է Դանձակ և առնում բերում պատասխանը, որը կարդալով զարմացած ասում է.—Ադա, Դանձակ մծա է, որ այսպէս չուտով գնում ես և գալիս։

—Շօշու դիւղն անցնում ես, Դանձակն է էլի։

91.

Գալիս են մի քանի գանգատաւորներ. դատելը յանձնում է Պուղուն։

Ասում է առաջինն.—Հարևանս անբարիշտ մարդ է, հանգստութիւն չունենք. ամեն օր կռուում է, հայհոյում, անիծում. բոլորովին զուր տեղն։

—Երեք միջոց կայ, որը ընտրում ես, այն արա. կամ տունդ ծախիր մի աւելի հայհոյիչ մարդի և դուրս եկ. կամ նա ծախէ տունը և դու մնա, և կամ քանդէ տունդ և տար վերև չինիր։

92.

Երկրորդն ասում էր.

—Եղբօրից բաժանուել եմ. ամեն ինչ բաժանել ենք յօժարութեամբ և վիճակ ձգելով վերջացրել. միայն մնացել է անբաժան մի տաշտակ. ոչ ինձ է տալիս, ոչ էլ ինքն է վեր առնում. ինչ անեմ։

—Կամ ծախեցէք տաշտակը և բաժանեցէք փողը և կամ տուէք աղքատի, որ բանեցնէ և ողորմի տայ ձեր ծնողաց։

—Ո՛չ այսպէս է անում և ոչ այնպէս։

—Գնա, միջից կէս արա, որն շատէ՞ տուր եղբօրդ։

93.

Երրորդն ասում էր

—Կինս լաւ չէ կառավարուում մօրս հետ. մայրս էլ բարկանում է և անիծում։ Ի՞նչ անեմ, չեմ կարող թողել մայրս, կինս էլ միշտ փախչում է գնում հօրենց տուն։

—Կամ պէտք է մօրից բաժանուես և կնոջդ հետ ջոկ ապրես, մայրդ էլ կառավարես, ապրուստը հոգաս, և կամ՝ բերել տաս

զուռնա-դաւալ, տանդ ածեն, պարեն։ Դու էլ առաջուց կը տարածես թէ որովհետև կինս անհնազանդ է մօրս, հարսանիք եմ անում, նոր կին եմ բերում։ Կինդ, երբ լսէ զուռնայի ձայնը և տարածուած լուրը, իսկոյն կը գայ և կը հնազանդուի։ Այդպէս էլ վերջանում է գործն։

94.

Մի քահանայ խիստ կոպիտ ձայնով և անախորժ եղանակաւ երգում էր «Որ պատուիրան ճշմարտութեան» բկ. շարականը։ Եկեղեցուց ելնելուց յետոյ ասում է Պուղին քահանային.

—Ա. տէր, եթէ Ներսէս Շնորհալին իմանար, որ դու այս շարականը այսպէս երգելու էիր, բնաւ չէր յօրինիլ...։

95

Ամարասի կաթուղիկոսն Մելիքին այցելութեան եկած ժամանակ հարցնում է.

—Պուղի, Մարալ-ջորին ինչի՞ ես բերել։

—Ծառայ եմ սուրբ աջիդ, Հոգևոր Տէր, Մարալ-ջորին դուք ինձանից կաշառք

առիք, ես էլ ձեզանից։ Հաւասարուեցինք։ Մովսէս մարգարէն ասել է. «Ով որ քո ջորին առնէ, դու էլ առ նորա ջորին»։

96.

Պուղի, լաւ քարոզիչ կը լինիս, եկ, վարդապետ ձեռնադրեմ քեզ։

—Հոգևոր Տէր, ես առանց ձեռնադրուելու անգամ Մէլիքիս համար թէ վարդապետ եմ թէ եպիսկոպոս։

97.

Պուղի, դու որ այս չափ խելօք ես, Մէլիքն ինչ պատճառով պել է դրել քո անունը։

—Միմիայն նորա համար, որ ես շատ խելօք եմ Իրանից։

98.

Կաթուղիկոսն կնքում էր իւր կնքով շատ գրուած կոնդակներ, զորս կարգաւորեցնում էր իւր ատենադպիրն. ասում է Պուղին.

—Հոգևոր Տէր, շատ ինդրում եմ, որ

մի կարմիր կնիք էլ իմ ճակատիս կնքէք, որ ուրիշ մարդի հետ փոխս չընկնիմ, որովհետև մի քանի ամիս առաջ համեղ տանձ էի հաւաքել և չուալը լցրել, բայց մինչև տուն բերելս դառել էր թթու սալօր։

99.

—Պուղի, մի զուարճաբանութիւն արա, լսենք։

—Հոգևոր Տէր, մի քահանայ շատ աղքատ է լինում, մաշուում է իւր փիլոնն, դրամ չէ ունենում, որ գնէ նոր փիլոնացու. ամաչում է ոչ ոքի էլ յայտնել։ Օրհնեալ երիցակինն ինգիլիզի խելք է բանացնում—խուզում է իւրեանց շատ շների երկամազ սև բուրդը, 15 անգամ լուանում սապոնով, յետոյ գզում, մանում, հինում, գործում մի փիլոնացու. ապա ձեռում, կարում մի լաւ փիլոն, տերտերն նորա վերայ քանի անագ հայր մեր ասելով, աղօթք ու օրհնութիւն կատարելով, իւր վերայ է առնում և ուրախանում։ Փիլոնն հնանալուց յետոյ էլ կոտորում է երիցակինն և նորանով կարկատում աւանակի չուլը։ Քահանան

նայում է, նայում կարկատանի վերայ և ասում.

«Ո՞վ ժամանակ, ժամանակ,
«Մի ժամանակ շուն էիք շատ հաչան,
«Մի ժամանակ Հրեշտակներ վերադ-
իլան.

«Այժմ էլ կացել ես մեր սև էշին ջոխտ-
իչան»։

100.

—Պուղի, ես միշտ ձեռնադրել եմ տա-
լիս լաւերը։

—Հոգևոր Տէր, լաւերը ձեռնադրում
ես և ըցում Ազգի ջանին։ Քո ձեռնադրած
վարդապետներից մին մի օր այս տեղ քա-
ղոզ տալաւ, ասեց. «Քրիստոս ասում է, թէ
օր մէկն զարկէ քո մի երեսին, դէմ արա
և միւս երեսդ»։ Թաւրիզ գնալիս ընկայ
չորս թուրքի ձեռք, մին մի լաւ զարկեց
երեսիս, դէմ արի և ձախը, զարկեց և
սրան, դէմ արի գլուխս, կուրծքս, մէջքս,
ուղածին չափ զարկեց ամեն տեղին էլ։
Ինքս ինձ մտածեցի և գտայ, որ այս խօսքը
ասող Քրիստոսին դեռ մի երեսին էին զար-

կել, միւսը դէմ չարաւ, այլ ինքընդինքը
պաշտպանելով ասաւ. «Եւ Յիսուս ասէ ցնա.
եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չա-
րին, իսկ եթէ բարի, ընդէր հարկանես
զիս[1])»։ Ուրեմն այս տեղ մի ուրիշ միտք կայ,
որ լաւ չեն հասկացել մեր վարդապետներն։
Քրիստոս մի մի տեսակ զէնք տուած է ամեն
անասունի, թռչունի։ Գոմեշին, եզան, կովին,
եղջերուին ևն, ևն տուած ամուր եղջիւր-
ներ. ձիուն, իշին տուած է ատամներ և
սմբակներ, որք առաջից խածնում են և
ետևից աքացի զարկում. առիւծին, վագրին,
ինձին, գայլին, խոզին և շան տուել է ճի-
րաններ և ճանկեր. օձին, կարձին, մորմին՝
թոյն, մեղուին խարտ, արծուոյն, բազէին,
շահէնին ևն, ևն—ամուր կտուց և սուր ճան-
կեր, որպէս զի դոցանից ամեն մին պահ-
պանէ իւր կեանքը և գոյութիւնը։ Անասուն-
ներին, գազաններին, թռչուններին, միջատ-
ներին այսպիսի զէնքեր տուող Աստուածն
մարդին ընաւ չիպատուիրել՝ թէ թող քեզ
ծեծեն, սպանեն, կողոպտեն, մերկացնեն.

1) Յով. ԺԸ. 22—23։

տունդ քանքեն. եղած չեղածդ ծեռքիցդ առնեն. երախաներդ թողեն որբ, մերկ, սոված, ծարաւ, կինդ որբեւարի, որ մինչև իւր մահուան օրն լալով, սգով, թառանչ քաշելով, ողջ ողջ գերեզման մտնէ, ևն, ևն։

Քրիստոս ասել է. «Որմին երեսիդ զարկեն, սիրով դարձուր և միւս երեսդ, որ զարկողն ամաչի իւր արածից և չզարկէ։ Քրիստոս բնաւ ասած չէ, թէ դու գնայ և յիմարաբար սպանել տուր քեզ։ Տակաւին մի երեսին զարկած՝ աճապարեց զինքը պաշտպանել Քրիստոս, ասելով. «Եթէ չար խօսեցի, վկայիր չարին համար, իսկ եթէ բարի, ինչի համար ես զարկուս»։

Հոգևոր Տէր, ծառադ եմ, քաղաքավարի ձևով ասացի։ «Ա. Թուրքեր, Աստուած սիրէք, հեռացէք գլխիցս, ինձ արնատէր մի շինէք, ինձ մարդասպան մի անէք, թողէք, որ շարունակեմ ճանապարհս»։

—«Հայ կեաւուր, դեռ խօսում ես համարձակ. դիմադրութիւն էլ ես անում, կարի ձենդ», և սկսեցին կրկին զարկել։ Ամեն ինչ կատարեալ էր, լցուել էր համբերութեան չափն, հունի չմաղաւս մին մին զարկի

ուզող ականջների տակին, երեքի փորերը խառնեցի երկայրով, մինն փախաւ և աղատուեց. սպանուածների վերայ ասացի մի թարս հոգոց, գնացի թաւրիզ։

Հոգևոր Տէր, Հայոց եպիսկոպոսներն, վարդապետներն և քահանաներն այսպէս քարոզներ տալով քանդեցին մեր ազգի տունը. Աստուծով, Աւետարանաւ և խաչով վախեցնում են ժողովրդեան աչքը, մոլորցնում միտքը և թուլացնում ձեռները։ Ասացին. «Ամեն բան մեղք է, կրնկնիք հրեղէն կրակի մէջ, ձեր գլխին քար եւ կարկուտ կը թափէ Աստուած, մարդի վերայ հրացան չկրակէք. թուրը, երկայրին պատեաններից չհանէք. գնացէք, մսագործի ոչխարի պէս, որ առանց խօսելու կոտորեն ձեզ, ջնջեն, որ գնաք Աստուծոյ Ս. քայլութիւնն»։ Պարսից մուշտէյիդ, ախունդ, դազի, մոլլա, դաւրիշ, շեյխ-իսլամ, թուրքի, արաբի հոգևորականներն էլ, հաստատ իմանալով որ Հայոց հոգևորականներն այսպէս քարոզներով են անուցանում իւրեանց ժողովուրդը, իրանք քարոզում են իւրեանց ժողովուրդներին ասելով. «Քրիստոնէից ապրանքն հա-

լալ է ձեզ. գողացէ՛ք, յափշտակեցէ՛ք, թալանեցէ՛ք, Քրիստոնէից արիւնը հալալ է ձեզ, սպանեցէ՛ք, կոտորեցէ՛ք, խլեցէ՛ք նոցա կիները, աղջիկները, տղէքը, փողը, ապրանքը, կերէք, խմեցէք, ճեմ քաշեցէք. ձերն է Մուհամմատի դրախտն, հիւրի, քեռիներն»: Այս պատճառով էլ գիշակեր արծւոյ նման թափուեցին Հայաստան Պարսիկ, Արաբ, Օսմանցի, Թաթար, Լեկզի, Քուրդ, Աւշառ, Զինկիզ-խան, Լանկ-Թամիր, սրուած թուրերով և սուրերով կոտորեցին Հայոց ժողովուրդը, քանդեցին վանքերը և եկեղեցիները, գերի տարան և թրքացրին շատերը, ծախեցին մի մասը։ Աւերուեցաւ Հայաստանն և քանդուեց Հայոց տունն, ճռաքաղ եղաւ Արամի, Տիգրանայ, Տրդատայ, Արմենակայ և Հայկայ երկիրն։ Տակաւին մինչև այսօր էլ նոյն փորձանքներին ենթակայ է մեր հայրենիքն և մեր մի բուռն մնացած Հայ ժողովուրդն, հազիւ թէ տասն բաժնից մինն։

Հոգևոր Տէր, տեսար թէ ուր հասացրին Աւետարանի միտքը ծուռ ըմբռնելու հետևութիւններն։ Կարդացէք Աւետարանի

երկու երեսն էլ. շատացրէք իմաստուն կարգաւորների թիւը, որ գոնէ այսուհետև կարողանան պահպանել մնացածը և օրինաւոր քարոզներ տալով՝ հանեն ժողովրդեան խըղճմտանքի փուշը, հասկացնեն, որ ինքնապաշտպանութիւնն ամենևին հակառակ չէ Աստուծոյ օրինաց, այլ ամեն մի անհատի անկապտելի իրաւունք է շնորհուած Աստեղծողից, ինչպէս տեսանք։ Ես էլ եմ կարդացել Աւետարանը. Քրիստոս պարզ ասում է. «Այն ամենը, ինչ որ կամենում էք, որ մարդիկ անեն ձեզ, նոյնպէս արէք և դուք նոցա. որովհետև իսկապէս այն է օրէնքն էլ մարգարէն էլ, այսինքն այնպէս են պատուիրում իսկապէս և օրէնքն և մարգարէները» (Մատ. Է. 12)։ Այս պատուերը Քրիստոս միայն մեր ազգին չտուաւ, այլ տուաւ և իւրաքանչիւր ազգի և իւրաքանչիւր մարդի։ Ես այսպէս եմ հասկանում այս խօսքի միտքը։ Քրիստոս հարցնում է իւրաքանչիւր մարդի. «Դու ուզում ես, որ ուրիշն տայ քեզ ողորմութիւն, պատիւ և յարգանք. դու սիրում ես ուրիշն քեզ հիւրասիրէ, նեղութեանդ օգնէ, կարօտ ժամանակդ փոխ տայ

քեզ»։—Այո, Տէր, ուզում եմ և սիրում եմ։—«Ապա ուրեմն դու ես ողորմիր, պատուէ և յանդանք տուր ուրիշներին. դու ես հիւրասիրէ ուրիշները, օգնիր այլոց նեղութեան և փոխ տուր կարօտեալներին։ Դու ուզում ես, որ ուրիշն քանդէ քո տունը, գողանայ քո փող և ապրանքը, սպանէ քեզ և քո զաւակները և մարէ քո ծուխը»։ Ոչ, չեմ ուզում, «նէ օրովհետև այդպէս է, ոչ ուրիշի ունեցածին ծուռ աչքով նայիր և ոչ նորա կեանքին և գերդաստանին»։—Չէ, Քրիստոս, ես ուժեղ եմ, զօրաւոր եմ, ես պէտք է սպանեմ, գողանամ, յափշտակեմ, քանդեմ այլոց տունները և լցնեմ իմ տունը, քեֆ քաշեմ։

—«Ուրեմն դու ուզում ես, որ ուրիշներն էլ սպանեն քեզ, գողանան և յափշտակեն քո կայքը և գոյքը. քանդեն քո տունը և ջնջեն քո սերունդը»։ Ահա այս է Ս. Աւետարան և աստուածաշնչի ոգին և վճիռն։

101.

—Պուղի, ես քեզ ասացի զուարճաբանութիւն արա, թէ փարոզ տուր։

—Հոգևոր Տէր, խօսքը առաջ դու բացիր. ասացիր. «Ես ձեռնադրում եմ լաւերը»։ Շատ ցաւ ունեցողն շատ կը խօսի։ Հայոց ազգի ցաւերն, Հայոց քարոզիչների քարոզների ընտասակար ուղղութիւնն շատախօս են արել զիս, ցաւագար են դարձրել։ Մեր ցաւերն, մեր նեղութիւններն եթէ քեզ չյայտնենք, Հոգևոր Տէր, էլ ո՞ւմ պէտք է յայտնենք։

102.

—Մէլիքին թանկագին արևն վկայ, Պուղի, շատ լաւ մեկնեցիր Ս. Աւետարանի այս խօսքը, եթէ բոլոր Աւետարանը այսպէս գեղեցիկ մեկնէիր, կատարեալ մեկնիչ կը լինէիր։

—Քո օծեալ կարգն վկայ, Հոգևոր Տէր. Ս. Աւետարանը քո վարդապետներից և եպիսկոպոսներից լաւ եմ հասկանում և լաւ էլ կը մեկնեմ, ցաւն այս է որ Մէլիքն անունս Պել է յայտարարել։ Լաւէ մարդի աչքն տեղից դուրս գայ, քան թէ վատ անունն։ Վախում եմ մին մեկնութիւն գրեմ, չընդունեն, ասեն մեկնիչն խենդ է եղել. խենդի

մեկնութիւնն ինչ կը լինի։ Լաւ էր Մէլիքին մէջքի կուզն դուրս պրծնէր. քան իմ անունն Պել հռչակուէր։

103.

—Ադա, անպատիւ արիր զիս Հոգևոր Տիրոջ մօտ, դժոխքն պէտք է ուղարկեմ քեզ։

—Մէլիք, քո ձեռքից պրծնելու համար շատ սիրով կը գնամ, ամսական քանի մանէթ փուլ կը տաս ինձ և տարեկան քանի ձեռք շոր (զգեստ)։

104.

—Պուղի, քանի՞ տարեկան ես։

—Հոգևոր Տէր, եթէ Մէլիքի ձեռքիցն այս տարի էլ ողջ և առողջ պրծնելու լինիմ, եթէ հաշուելու լինինք և գիշերները, ութսուն տարեկան եմ. իսկ եթէ հիմի մեռնեմ, քառասուն տարեկան եմ.

105.

—Կինդ քանի՞ տարեկան է, Պուղի։

—Հոգևոր Տէր, ոնը ծանր է (յղի է), եթէ Մէլիքի աղօթքովն ողջ առողջ ազատուի 31 տարեկան կը լինի։

106.

—Քանի՞ զաւակ ունիս։

—Մէլիքի արդար աղօթքովն եթէ կենդանի կը մնայ նոր աշխարհ եկող մանուկն էլ, կունենամ 5 զաւակ։

107.

Գործակալ վարդապետն սաստիկ ծեծում էր անբարոյականութեան պատճառաւ մի կին, որ ամեն փայտի հարուածը ընդունած ժամանակ գոչում էր ցաւագին ձայնով.

—Տունդ քանդուի, վարդապետ, կինդ մեռնի, վարդապետ, երախաներդ կոտորուեն, վարդապետ. հոգիդ սատանան տանի, վարդապետ։

Ասում է Պուղին.

—Վարդապետի տունն քանդուել է այն օրում, երբ նա մտել է վանք. մեռել է կինն լոյս աշխարհ չտեսած, կոտորուել են երախաներն իւր իրանում. վարդապետի հոգին արդէն սատանայինն է...։

Զափազանց ծիծաղում են կաթուղիկոսն և Մէլիքն և ազատում յանցաւոր կինը։

108.

Մի ծպտեալ ռուս լրտես դիմելով Մէ-լիքարան՝ թախանձանօք խնդրում է ձի Շուշի գնալու, իմանալով որ չկար ռուսերէն գիտցող, աշխատում է հասկացնել ձեռքի շարժումներով.—Տաշի, տաշի (տար, տար)։

Պատասխանում է Պուղին.—Քունծահար, կացին չկայ, ուրադ չկայ, ինչով տաշեմ։

—Սկարէյ, սկարէյ (շուտ շուտ).

—Որպէս թէ փայտը տաշէց, տաշեղը շատացրուց, մնաց կսկարէնքը (եռոտանի), որ փլաւ եփի, ուտէ։

—Պադի սուդա (այս տեղ եկ)։

—Հիւսն վարպետ Բադին տան չէ, գնացել է Դանձակ։

—Սխտի չորտ (ով սատանայ)։

—Զոռն կենայ (փակչի) քո պկաղ և քո հօր պկան (պարանոցին)։

109.

—Ադա, Պուղի, ինչ է ուզում այս մարդն։

—Մէլիք, չես տեսնում, ուզում է ուստա-Բադին, կացին, ուրադ, կսկարէնք։ Այնպէս է երևում, որ տուն պէտք է շինել տայ։

110.

Ռուսն ոտքով հեռանալուց յետոյ, Մէ-լիքին հիւր է գալիս մի Եւրոպացի հնախոյզ, որ լսած լինելով զուարճաբանի համբաւը, անում է ձեռքի շարժումներով 3 առաջարկութիւն և ստանում գոհացուցիչ պատասխան։ Հնախոյզն առանց խօսելու քաշում է գետնի վերայ մի կարակնաձև գլոր գիծ։ Երկրագիծը կիսում է Պուղին՝ նոյնպէս առանց խօսելու։ Հնախոյզն երկու ձեռները իրար մօտեցնելով՝ ձևացնում է մի գունդ. Պուղին էլ ձևացնում նոյն գունդը շրջապատող աւելի մեծ կամար։ Հնախոյզն բարձրացնում է միայն աջ ցուցամատը. իսկ Պուղի աջ երեք մատը։ Եւրոպացին կոչում է.—Վիւա, վիւա, Պուկի (կեցցէս, կեցցես, Պուղի)։

Հետաքրքրութեամբ հարցնում է հնախուզի ընկերն։ Բացատրում է հնախոյզն ասելով.—Ես ասացի, այսպէս կլոր է աշխարհս. Պուղին ասաց՝ կէսն ջուր է։ Ես ասացի, օդի մէջ սահմանուած է երկրագունդս, նա պատասխանեց, շրջապատուած է տիեզերքով և երկնային կամարով։ Ես ասա-

ցի, մի է Աստուած, Պուղին պատասխանեց. մի Աստուածութեան մէջ կայ երեք անձն- Հայր, Որդի և Ս. Հոգի։ Այս պատճառաւ ես գովեցի իւր արժանաւորութիւնը և հաստկացողութիւնը։

Հարցնում են և Պուղուն Ս. կաթուղիկոսն և Մելիքն.

—Եւրոպացին կլոր գիծ քաշելով ինձ հարցուց. մի ման փլաւ կայ, կուտես, Պուղի։ Ես ասացի. կէսը կուտեմ։ Նա ասաց. մի ման էլ լաւ խորոված կայ, այն էլ կուտես. ես պատասխանեցի, ծածկիր ամանի բերանը՝ որ չառչի խորոված, մինչև վերջացնեմ փլաւը։ Նա ասաց. մի մատով աչքդ կը հանեմ, ես էլ իմ երեք մատովս ասացի, երկու աչքերդ էլ կը հանեմ, քիթդ էլ պուկ կը տամ, խելօք կաց հա։

111.

—Պուղի, այսօր չափազանց համարձակ ես խօսում։

—Մելիք, շատ շատերն կան ինձանից աւելի համարձակ խօսող՝-օրինակ հարբածներն, խենթերն, գիժերն, յանկարծ հարուածողներն, կաթուղիկոսների շաթիրներն, շահերի խոհարարներն, խանների եասաւուլներն (արտաքին ծառաներ), տանուտէրների դզիրներն և մարդոց վերայ իշխած կիներն։

112.

Աւետարանոցի դպրապետն ամեն անգամ «Գուհութիւն» ասելու ժամանակ հանում է ժամաշալիկը և խոռոված պէս բարկացած դուրս գնում եկեղեցուց։ Պուղին մի օր հարցնում է ելնելու պատճառը, պատասխանում է դպրապետն.

—Դուրս եմ գնում նորա համար, որ պատարագում յիշում են կաթուղիկոսին, մեր առաջնորդին, Մելիքին և ժամարարին անունները, իսկ ես այսչափ տարուայ աշխատաւոր եմ տաճարիս, չեն յիշում իմ անունը։ Ասում է Պուղին դպրապետին.

—Բաղի, յետ դառ, գեց (զգենուլ) շապիկդ և երգիր, ես յիշել կը տամ քո անունը. զկնի պատարագին ասում է սեղանի երգիչներին.—Այսուհետև յիշեցէք պատարագում և ձեր դպրապետի անունը այսպէս. «և մին նստելում 15 լաւաշ գղող

դպրապետ Բաղդուն, որ ամեն պատարագի կիսում հանում է ժամաշապիկը և փախչում։ Բաղին խոստանում է այլ ևս չհանել մինչև պատարագի վերջն, մինչև թէ բնաւ չյիշուի անունն։

113.

—Պուղի, կինս լաւ չէ կառավարուում ինձ հետ։

—Ի՞նչ պատճառաւ։

—Հարստի աղջիկ է. բերել է իւր համար փող, տնամիջի կահուկարասի, շատ հագուստ, աղախին։ Այլ ևս չէ նայում կղակիս։ Ի՞նչպէս անեմ։

—Դու կին ուզելու տեղ, ուզել ես փող և տնամէջ. դու քո տան համար կին բերելու տեղ, բերել ես Թագուհի։ Ուրեմն այսուհետև ձեր տան մէջ կնոջդ ամենափոքր ծառան դու ես. այսուհետև նա է քո տան տէրն և մարդն, իսկ դու նորա ծառան և սարուկն, մինչև մահդ պէտք է համբերուես Թեամբ տանես։

114.

Մի ուրիշն հարցնում է.

—Պուղի, քեզ մատաղ. բա ես ի՞նչ անեմ, պսակուել եմ հարստի աղջկան հետ, ամեն տարի ուզում է երկու ձեռք հագուստ. ես էլ աղքատ մարդ եմ, ուժս չէ պատում անել երկու ձեռք զգեստ։

—Դու էլ գնա, տարին մի գոմէշ կամ եզնը ծախիր և զգեստ արա կնոջդ համար։ Վերջապէս կտրիր բերանիցդ և պատրաստիր զգեստ։ Եթէ դու չանես, կինդ ուրիշ ճանապարհաւ կանէ։

115.

Մի ուրիշն հարցնում է.

—Պուղի, ախր աղջիկս մեծացել է և մնացել տանս։

—Մալքում (Մելքոն), մինչև ցայսօր ոչ ոք չեկաւ աղջիկդ ուզելու։

—Հինգ անգամ մարդիկ եկին, ուզեցին բայց ես չտուի։

—Ի՞նչ պատճառաւ։

—Պահեցի որ լաւ մարդի տամ, նա էլ չուզեց։

—Հինգից մինը հաւանելու և տալու էիր։ Այսուհետև լաւն այն է, որ նշանես առաջի եկողին. էլ ուրիշ ճար չկայ։

116.

Ներս են մտնում Իբրահիմ-խանից յղուած չորս սպասաւոր և իմացնում, որ Պուղին տանելու են կախելու։ Կինն ասում է.

—Ա. մարդ, ողորմի հօրդ, չուան տար, գալու ժամանակ դարձիր փայտ բեր, որ հաց թխեմ։

—Այս մէկ. ասում է Պուղին և գնում տանից։ Երբ ներկայանում են խանին Շուշում, խանն հրամայում է.

—Տարէք, շուտով կախեցէք կախաղանից։

—Այս էլ երկու, ասում է Պուղին թուրքերէն բարձր ձայնով, երկուսի խելքն էլ մի և նոյն է,

—Ո՞ր երկուսի, Պուղի, հարցնում է յետ կանչել տալով։

—Խան, իմ կնոջ խելքն և քո խելքն մի և նոյն է։

—Ահա թէ ինչպէս. կինս արդէն յսեց,

որ ձիս բերում են կախաղան հանելու և կախելու, փոխանակ լալու և սգալու, որ մարդը տանում են սպանելու, ծիծաղելով ասաց. «չուանը տար և վերադարձիր մի շալակ փայտ բեր, հաց պէտք է թխեմ»։ Դու էլ, խան, առանց հարցափորձի, առանց քննութեան և դատաստանի, առանց ստուգիւ իմանալու թէ ես եմ այդ յանցաւորն, թէ ուրիշն է. անմիջապէս վճռեցիք, «Տարէք և շուտով կախեցէք»։ Ահա այս պատճառաւ երկուսիդ խելքն էլ մէկ է։

Ոչ միայն աղաստուում է Պուղին, այլ և մի ընտիր նժոյգ ձի նուէր ստանալով դառնում է տուն։

117.

—Պուղի, ես լսեցի որ քեզ տարել են կախելու, այժմ դու գալիս ես խանի ձիով։

—Պուղուն աղան, Պուղուն տէրն որ Մէլիք-Շահնազարն լինի. թէ կը կախեն և թէ կը խաչեն։

—Ադա, ինձ հաւան չէս. խանն իմ խաթրիս համար է արձակել քեզ անվնաս և նժոյգ ձին էլ պարգևել։

—Մէլիք, քո արեդ վկայ, որ քո խաթրով չեմ ազատուել, այլ կնոջս յիմար խաթրով և իմ խելքով ձին էլ ընծայ ստացել։

118.

—Ա. դա Պուղի, ես այն ժամանակ կը հաւատամ, որ իմ խաթրով ազատուած չես, այլ քո խաթրով, եթէ գնաս Ղանլու-Զամանխանին տանն հիւր լինես մի գիշեր և ողջ առողջ դառնաս. քեզ կընծայեմ երեսուն թուման փող և երկու ձեռք հագուստ։

Պուղին գնում է և հիւր լինում։ Ղանլու-խանն սկսում է ծեծել իւր կիները, նախատել աղախինները և չուաններով կապոտել որդիքը։ Պուղին ամենևին ոչ խօսում է և ոչ խառնուում մարդասպան խանի գործողութեան։ Յետոյ ազատում է խանն իւր որդիքը, և ընտիր ընթրիքով մեծարում իւր հիւրը։

—Պուղի, ես սպանած եմ իմ բոլոր հիւրերը այն պատճառաւ միայն, որ նոքա միշտ խառնուած են իմ ընտանեկան ներքին գործերին և միջամտած իմ տնային կարգադրութեանց։ Եւ որովհետև դու ոչ

խառնուեցիր և ոչ միջամտեցիր, ոչ միայն ողջ-առողջ ազատում եմ քեզ, այլ և տալիս եմ քեզ մի լաւ վկայական, որ դու քո մեծ խոհեմութեամբ դտել ես ինձանից մեծ ընդունելութիւն։

Պուղին վկայականը մատուցանում է Մէլիքին, բայց Մէլիքն ոչ խոստացած փողն է տալիս և ոչ շորը։

119.

Պուղին մի հնարքով փոխ է առնում Մէլիքից 35 թուման դրամ։ Քանի անգամ որ պահանջում էր Մէլիքն փոխ տուած դրամը, պատասխանում էր Պուղին.

—Մէլիք, եթէ գնաս, Ղանլու-Զամանխանին մի գիշեր հիւր լինես և ողջ-առողջ դառնաս, քեզ կը տամ 35 թուման փող և երեք ձեռք զգեստ։

120.

Սկզբունքով անհաստատ, ընաւորութեամբ փոփոխամիտ մի երիտասարդ, աղքատէր ձևանալով, ճոռոմաբանում է հասարակութեան մէջ թէ ես ազգասիրաբար ա-

բել եմ այս ինչ գործը և այն ինչ գործը։ Ասում է Պուղին.

—Մակիչ (Մկրտիչ), ես քեզ Մելիքին մոտ աղուես եմ տեսել. խանին մոտ՝ կատու, եպասաւորներին (քաղաքական պաշտօնէից սպասաւոր) մոտ՝ մուկն, Թուրքի մոտ՝ նապաստակ, կնոջդ մոտ՝ առիւծ, հասարակութեան մէջ վագր: Դու նման ես կորկոտ անող ջրաղացի. դու մեծ մեծ ջարդող ազդասէր ձեւացողներից ես և ոչ թէ գործքով ապացուցանող ճշմարիտ ազգասէր։

121.

Մելիքի հեռի ազգականներից մին շատ անգամ գնում է և մատնում Պարսից Շահերին և խաներին Արցախի հայ մելիքները և հայ ժողովուրդը և քսութեամբ քանդում հարազատ մելիքների սերտ յարաբերութիւնները և ամեն տեղ պարծենում է իբրև մելիքազուն։ Մի օր ասում է Պուղին.

—Ջիւմշիւտ-աղա, միայն հայերն չեն գիտում, որ դու մելիքազուն ես, այլ և Շահերն, խաներն, պարսիկներն և վրացիներն էլ։ Բայց սատանան էլ էր Աստուծոյ

հրեշտակն, Ցուդան էլ Յիսուսի աշակերտն, Վասակն ու Մեհրուժանն Հայոց իշխաններ, Սուրմակն էլ Հայոց քահանայ։ Սակայն լաւ մտածիր. ինչ օգուտ ունի քո իբրև մելիք-քաղուն պարծենալդ, երբ քո գործած գործերն անպատուաբեր են մելիքների անուանց և պատուին, երբ քո հայ լինելդ նախատինք է Հայութեան, երբ քո Արցախեցի լինելդ ամօթալի է Արցախին և քո մելիքազուն լինելդ բոլորովին զզուելի Մելիք-Շահնազարեանց օճաղին։

122.

Պուղու ներկայութեամբ մի երեխայ թախանձանօք խնդրում է իւր հօրից, որ վարժապետ ձեռնով իրան տար ուսում և կրթութիւն և դաստիարակութիւն։ Ինչպէս շատ անգամ ասել էր, էլի ասում է—Որդիս, վարժապետին տալիք փողը կը տամ քեզ համար հագուստի, վարժապետին տալիք փողով կառնեմ քեզ համար ձի. վարժապետին տուած փողն կորած է. փողը կը շահացնեմ քեզ համար, որ մեծանաս և ապ-

բես հարուստ։ Երախան միջնորդ է ձգում Պուղուն, որ ասում է.

—Ուհան, որդիդ քեզանից խելք է խօսում. թող կարդայ, դաստիարակուի, գիտութիւն սովորէ. որ խելքով, գիտութեամբ և իմաստութեամբ հարուստ լինի և ոչ թէ փողով։ Շատ մարդիկ թողել են իւրեանց մահից յետոյ իւրեանց որդւոց համար հարստութիւն և կալուածք և ոչ թէ կրթութիւն և իմաստութիւն։ Ցգէտ որդիք վատնել են այդ ամենը և մնացել մերկ։ Իսկ այն հայրերն, որ թողնում են ուսեալ, կրթեալ ազնիւ, գիտուն զաւակներ և ոչ թէ հարստութիւն, զաւակներն իւրեանց գիտութեամբ ապրում են փառաւոր և ձեռք բերում ամեն ինչ։ Անասունի նման ապրող, անասունի նման մեծացող մարդն էլ անասունից էլ աւելի անասուն կը լինի։ Մարդը մարդ չինողն դաստիարակութիւնն է և ուսումն։

Ուհանն այնքան ժլատ էր, մինչև անգամ Պուղու խօսքերը ընդունեց ինչպէս գայլի գլխի կարդացած շարական։

123.

Մի մարդ էլ որդին բերում է Պուղու մօտ, որ խրատէ, ասելով.—Այս որդիս ուսումնարան չէ գնում։

—Ի՞նչ է պատճառն որ չես գնում, այ տղայ։

—Պուղի ապեր, գալիս եմ տուն, հայրս է ծեծում, գնում եմ ուսումնարան, նոր եկած վարժապետն Քալախա է զարկում ոտքերիս, այնքան ծեծում, որ արիւնն սկըսում է վազել, շատ ծեծելուց մաշկուել են ոտքերիս տակի կաշիներն։ Սորա համար չեմ ուզում գնալ։

—Երբ ոչ հայրդ քեզ ծեծէ և ոչ վարժապետն, կը գնա՞ս կարդալ ուսումնարանում։

—Պուղի ապեր, շատ սիրով կը գնամ և ուրախութեամբ։ Որովհետև այնքան ծեծում է, որ ամբողջ ուշք ու միտքս տանում են Քալախան և ճրպատն։

Պուղին տանում է ուսումնարան Երախան և նորա հայրը և ասում նոր ուսուցչին.

—Վարժապետ, այսուհետև ամենևին և ամենևին չզարկես ոչ մի երեխայի. կայրես Ֆալախան և ճրպատները. որովհետև անասնոց համար է ծեծն և ոչ մարդոց։ Ուսումը, կրթութիւնը, դաստիարակութիւնը խօսքով է մատակարարում խոհեմ դաստիարակն և ոչ թէ փայտով։ Այսչափս բաւական է առայժմ, վարժապետ. այլ ևս չծեծես հա, չծեծես։ Չծեծես և դու որդիդ, Սևի, դու էլ խելօք տղայ, բնաւ յետ չես մնալ ուսումնարանից։ Պատասխանում է ուսուցիչն.—Մինչև որ աշակերտի ոտքերին վերայ 15 Ֆալախա չկոտրես և 300 հատ ճրպաս, մարդ չդառնար աշակերտն։ Իմ վարժապետն իմ վերայ 30 Ֆալախա է կոտրատել, 1000 հատ էլ թբլղի ճրպաս: Այսու ամենայնիւ վարժապետն ոչ եթէ համոզմամբ, այլ Պուղու երկիւղից հեռացնում է ֆալախան էլ, ճրպատներն էլ։

124.

Հետևեալ տարում կրկին սարքում է վարժապետն ֆալախան և ճրպատները. ծեծուում է մի երախայ, որ հիւանդանում է

երկու ամիս, դանդատն հասնում է Մէլիքին և դատաստանն յանձնուում է Պուղուն։

Մէլիքարանի բակում նոյն ֆալախայով ամրապնդուում են նոյն վարժապետի ոտքերն, ֆալախայի երկու կողմից պինդ բռնում են Մէլիքի ծառաներն և Պուղին սկսում թբլղի ճրպատով զարկել վարժապետի ոտքերին։ Վարժապետն, հարուածների ուստակութիւնից ստիպեալ, քանի անդամ որ աղաչում էր Պուղուն բաւ համարել, վերջացնել հարուածը, Պուղին ասում էր. «Մինչեւ որ վարժապետին ոտքերին վերայ 15 Ֆալախա չկոտրես եւ 300 թբլղի ճրպաս, վարժապետն վարժապետ չդառնար»: Մէլիքի միջնորդութեամբ արձակում է վարժապետը։

125.

Մի երիտասարդ կամենում էր վարդապետ լինել, խորհուրդ է հարցնում Պուղուց, որ ասում է.—Ա. որդի, դու արդէն չափահաս ես, կարող ես որոշել քո վիճակը, գիտես քո կարողութիւնը և համբերութիւնը։

—Նատ և շատ խնդրում եմ, որ մի բան ասես։

—«Ի՞նչ ասեմ, դու այժմ խելահաս ես, գիտես բարին և չարը, քո օգուտը և վնասը։ Վարդապետութիւնն կատարեալ զինուորութիւն է. պէտք է բուռն զօրութեամբ պատերազմել անընդհատ մարմնոյ հետ, աշխարհիս ամեն բերմանց հետ և սատանայի հետ։ Վարդապետութիւնն ամեն մարդոց գործ չէ, ամենագժուար գործ է։ Սրբայութիւնը վանքերում բաթմանով չեն ծախում եւ գիւղերում խսիլով։ (Խսիլն երեք քառորդ ֆունտից աւելի է մի փոքր) վախում եմ, թէ մի հոգի ունիս, այն էլ տանես վանքում կորցնես, ծախես սատանին վերայ։ Այնպէս է երևում, որ դու զզուել ես Պարսից և խանների անիրաւութիւններից։ Ա. դա, դու որ չես կարողանում կռուես մի թշնամու հետ և յաղթես նրան, վանքում ինչպէս կռուելու ես երեք թշնամու հետ։ Իւղիր, սրբիր հրացանդ, շատացրու վառօդ գնդակդ և աշխարհի ցոյց տուր քո քաջութիւնը։ Աւելի լաւ է գեղում մեռնիլ քաջութեամբ և Վարդանի նման բարի անուն թողնել, քան

թէ թշնամուց վախենալով փախչել և վանք մտնել։ Պարսից և խանների զօրութիւնն արդէն տկարանալու վերայ է»։ Ասում են աւանդութեամբ, որ այն երիտասարդն եղած է Սափարի-Իւզբաշին, որ 1826-ին արած է նշանաւոր քաջութիւն Աբաս-Միրզայի զօրաց դէմ։

126.

Պուղին Մէլիքից նամակ է տանում Շուշի Իբրահիմ-խանին, որի մօտ հաւաքուած պարսիկ հոգևորականներն և բէկերն ասում են.

—Պուղի, ափսոս որ դու հայ ես. այդ պատուական գեղեցկութիւնն, բարձր հանճարն, լուսաւորեալ գաղափարն, վսեմ միտքը, մշտապատրաստ սրախօսութիւն աւելի մահմետականի կը վայելէին քան քրիստոնէի։ Շատ լաւ կանես, եթէ թուրքանաս. ամենքս քեզ կը տանք հարիւրական թուման փող. խանն էլ կը տայ կալուածներ և իւր աղջիկը, այնպէս որ ապագայում դու կը լինիս Ղարաբաղիս թագաւորին երկրորդն և ուրիշ խօսքեր։

—Կրօնը փոխելով մարդս կատարեալ չլինիր, մի կտոր մորթի մարմնից կտրելով և նետելով մարդ չարբանար-պատասխանում է Պուղին—մարդ պէտք է փոխէ սիրտը դէպի բարին և դէպի առաքինութիւնն. կրօնն պէտք է ազդէ սրտի և զգացմանց վերայ։ Քրիստոնեաներից թուրքացածն ձեզ համար ոչ թրքութիւն կանէ, ոչ մահմետականութիւն և ոչ իսլամութիւն։ Կրօնը փոխում են միայն անազնիւ, ընչասէր և ծոյլ և անպատիւ քրիստոնեաներն։ Դող, աւազակ, մարդասպան և անազնիւ են թլփատուածներից ամենամեծ մասն։

—Պուղի, ասում է խանն, հաւատա, անկեղծ եմ ասում, աղջիկս քեզ կը տամ, եթէ թլփատուիս։

—Խան, եթէ այդ անեմ, թէ Քրիստոսի արքայութիւնից կը զրկուիմ և թէ Մուհամատի դրախտիցն...։

127.

Պուղի, բա ասիլ չես, այսօր երեք մարդիկ եկին ինձ տեսութեան. մինն ասաց. «ես Թաղլարեցի եմ, Ստամպօլից եմ գալիս».

երկրորդն թէ «Ճուշեցի եմ, Արաբստանից եմ գալիս», երրորդն թէ «ես Կուսապատցի եմ, Մոսկուայից եմ գալիս»։ Ես մնացի բոլորովին զարմացած։

—Մէլիք, խէ՞ զարմանում ես. աշխարհիս ամեն անկիւններումն էլ Ղարաբաղցիներ կան։ Ղարաբաղցիք պանդխտութիւն սիրող են. թողած իւրեանց տուն, տեղ, երախայ, ընտանիք, թափառում են օտար և հեռի երկիրներում։ Դոնէ յիշում են իւրեանց քաղցր վաթանը և յետ դառնում տարին մի անգամ ծիծեռնակն, կռունկն, արագիլն, տատրակն, բիւլբիւլն և միւս թռչուններն. բայց մեր Ղարաբաղցիք տարիներով էլ յետ չեն դառնում. այլ կարօտ իւրեանց վաթանին, պապենական հողին, ջրին, որդոց և ընտանեաց, մեռնում են որն Անգղիայում, որն Փռանգստանում, որն Չինաստանում, որն Ամերիկայում։ Հնդկաստանում մի ձմերուկ են կարել, մէջից մին Ղարաբաղցի է դուրս պրծել և այն տեղ կանգնել։

128.

Մէլիքն կարել է տալիս մի քանի մարդոց քիթը, չգիտեմ ինչ յանցանքի համար։ Քիթն կարուածներից մին լինում է Աւետարանոցից՝ ձիթահանքի վարպետն, որի կինն գալով ասում է.

—Ա. Պուղ, քեզ մատաղ, ուզում եմ մարդիս քիթը տանեմ, բայց չեմ ճանաչում թէ որն է, խնդրեմ դաս և ցոյց տաս ինձ որ տանեմ։

—Ա. պել քունծահեր, դու, որ քսան տարի դիշեր ցերեկ ապրել ես մարդիդ հետ, չես ճանաչում մարդիդ քիթը, ես մի քանի անգամ տեսնելով ինչպէս կարող եմ ճանաչել։ Դէ գնա՛ մին մին վեր առ, հոտ քաշիր, ինչ քթից ձիթահոտ գայ, քո մարդինն է, վեր առ և դնա։

129.

Մի մարդ չափազանց հայհոյիչ է լինում, շատ անգամ էլ հայհոյում է յանիրաւի և զուր տեղն։ Շատ աշխատում է մէլիքն, շատ ծեծում է, որ կարողանայ ուղղել, անհնար է լինում, շատանում են և գանգատաւորներն մարդի մասին։ Ասում է Մէլիքն.—Պուղի, եթէ կարողանաս ուղղել այս մարդը, մին ձեռք շոր կը տամ։ Մի օր էլ երբ մարդն սկսում է հայհոյել մեռել, կենդան, բերան, հոգի, հայր, մայր, կին, ուն, վազում է բերում տանից մի չուալ, բաց անում չուալի բերանը և իբր թէ չուալի մէջ լցնում բոլոր հայհոյութիւնները, պինդ կապում չուալի բերանը, շալակում տանում հանգստարան, դարձնում հայհոյչի հօր տապանաքարը, չուալը թափ տալիս գերեզմանի վերայ, դարձեալ իւր տեղն դնում բարը։ Հայհոյիչն տեսնելով այս ամենը, լալով դալիս համբուրում է իւր հօր տապանաքարը և թողում հայհոյութիւնը։ Մէլիքն զարմանալով Պուղու հնարքի վերայ՝ տալիս է խոստացած շորը։

130.

Մէլիքին հիւր է գալիս Էջմիածնի միաբաններից մին։ Այս ուսեալ և բարի վարդապետն խօսում է իմաստալից և խրատական քարոզներ. Պուղին ամեն օր եկեղեցի գնալով, քարոզի ժամանակ, հաւաքում է

աջ ձեռնով խմասանները և դեղահատի նման բերանն ձգելով կուլ տալիս։ Ուղղու ականջին հարցնում է.—Այդ ինչ ես անում ա դա։

—Մէլիք, հայրսրբի խոսած խօսքերն կեանք են և կենդանութիւն, շունչ են և հոգի (ալմաս, մարջան, լալ ու ջաւահիր) հաւաքում եմ, ամբարում մտքիս մէջ, քանզի խօսքի սով տարում ամենակարևոր են։

131.

Պարսկաստանից Մէլիքին հիւր եկած Շահզադի որդին հարցնում է.—Ուղղի, հայերն ինչի համար չեն ուտում ուղտի միս։

—Շահզադա, թուրքերն (մահմեդականներն) ինչի համար չեն ուտում խոզի միս։

—Ուղտն գնում է Հաջ, Մէդդէ, Մաշհատ, Հաղրաթի-Աբաս, այդ պատճառաւ հալալ է նորա միսն։ Իսկ խոզն չէ գնում ոչ մի տեղ, նորա համար էլ պիղծ է։

—Շահզադա, նախ այդ ասած ուխտատեղիներն գնում են ձիեր էլ, ջորիներ էլ, էշեր էլ. ինչ պատճառաւ հալալ չեն այդ անասնոց միսն։ Երկրորդ՝ եթէ խոզն,

խոզն ոչ թէ մինչև Մաշհատ, այլ մինչև աշխարհիս ծայրերն էլ կը գնայ և կը դայ։ Ուրեմն պիղծ չէ։

132.

—Ուղղի, հայերն ինչ փաստով չեն ընդունում մեր Մուհէմատի մարգարէութիւնը և Քրիստոսը դաւանում են Աստուած։

—Այն փաստով, որ ինչպէս ամենայն մարգարէներն, նոյնպէս և Քրիստոս, յարգելով խղճի և մտքի ազատութիւնը, քարոզած են ճշմարտութիւնը և թողած ընդունել և չընդունելը մարդոց ազատ կամաց։ Բայց Մուհամմատն տարածել է իւր կրօնը զէնքի ուժով, խղճի և մտքի ազատութիւնը ճնշելով և մարդոց կամաց ազատ իրաւունքները բռնաբարելով։ Նոյն իսկ ձեր մարգարէի վկայութեամբ արդէն յարութիւն առած է Քրիստոս և երկինք համբարձած։ Իսկ ձեր մարգարէն, ըստ որում մարդ էր միայն, մեռնելուց վերջն թաղուած և մնացած է գերեզմանումն։ Այս ուրեմն ձեր մարգարէն իբրև մարդ Քրիստոսի դատաստանի տակն է։ Իսկ Քրիստոս որովհետև

աստուածամարդ էր, փառաւոր յարեաւ և երկինք դնաց, այս պատճառաւ դաւանում ենք Աստուած, որ իւր աստուածային զօրութեամբ բժշկեց ի ծնէ կոյրը, 28 ամեայ անդամալոյծը և յարոյց շատ մեռեալներ։

133.

—Պուղի, զօրաւոր փաստեր մէջ բերելով փիլիսոփայօրէն հաստատեցիր ասածներդ։ Ես զարմանում եմ թէ ով խենդ դրած է քո անունը։

—Խենդերին խենդն անուանած է դիս խենդ։

134.

Պուղին խնդրում է Շահզադայից, որ չափաւորէ Իբրահիմ-խանի բռնութիւնները, յուղղութիւն ածէ կամայականութիւնը, վերջ դնէ նորա անիրաւ մարդասպանութեան և թեթևացնէ ժողովրդեան հարկերը և այցելէ միւս մէլիքներին ևս։ Խոստանում է Շահզադան կատարել խնդիրը։ Բայց բարկանում է Մէլիքն Պուղու վերայ, որ իւր բարեկամ խանի մասին դանդատեց և

թշնամի մէլիքներին ևս այցելել խնդրեց Շահզադայից։ Պատասխանում է Պուղին։

—Մէլիք, ինչի չես ուրախանում, որ Հայոց ազգի խելօքների ձեռնով քանդուած գործերն վերաշինուում են մի խենդի ձեռնով, իւր իսկ Պուղու ձեռնով։

135.

Մէլիքն, Պուղու այս խօսքերից սաստիկ վիրաւորուելով, ներս է կանչում ծառաները և դահիճը, որ Պուղու քիթը ևս կարէ։ Պուղին ասում է ծառաներին և դահճին.

—Մի փոքր սպասեցէք, խօսելիք ունիմ. ապա խօսքը դարձնելով Մէլիքին, ասում է. Այնպէս երևում է, որ չափազանց բարկացած ես իմ վերայ։ Այսչափ տարի է որ ես վերջին ծայր հաւատարմութեամբ ծառայում եմ քեզ։ Ամեն պարագայի մէջ, ամեն ժամանակ, ամեն կերպ պաշտպանել եմ քո պատիւը, անունը և միշտ բարձրացրել։ Դու, Մէլիք, փոխանակ ուրախանալու որ ես ուղղում եմ քո սխալները, դու՝ մոռանալով իմ ամենամեծ և ամենադժուար ծառայութիւնները, կտրել ես տալիս քիթս, և այս

ինչ յանցանքի համար,—միայն երկու խօսքի՞ցս նեղանալու պատճառաւ։ Մէլիք, դու այնքան չարութիւն ես արել Հայոց աղդին և Ղարաբաղի հայոց դէմ, ձրդ Փանահ-խանը իբրև հարազատ խան ընդունելով և հակառակ հարազատ մէլիքների կամքին այն ձրդը Շուշում-Ղարաբաղի սրտում–ընակեցնելով և անհամար չարեաց պատճառ դառնալով, որ աններելի են քո յանցանքներն։ Եթէ ես չլինէի, հարազատ մէլիքներն քո այդքան յանցանքի համար քո քիթդ էլ կտրած կլինէին, կճիպդ էլ. մանաւանդ Դիզակի Մէլիք-Եսային, որի քոյրը անպատիւ կերպիւ արձակեցիր տիկնութիւնից և նորա աղջիկը-հայ քրիստոնեայ Հիւրդատը-տուիր կնութեան անօրէն Թուրք ձրդ-խանին, և Թուրք կիներով լցրիր ապարանդ։ Դէ ուրեմն եկէք և կտրեցէք և իմ քիթը...։ Հեռանում են դահիճն և ծառաներն։

136.

Մէլիքի համար բերում են օղի և վարունկ, ուտելու ժամանակ Պուղին վեր է առնում աղամանից մին քիչ աղ և ցանում

Մէլիքի անմաղ (թափուած) գլխին։

—Ա՛դա, ա՛ պել շան տղայ, այդ ինչ ես անում։

—Մէլիք, Պըլը-Պուղին քեզ մատաղ, խելքդ անալի է, անհամել է, աղում եմ, որ համովանայ։

137.

Գալիս են Մէլիքին այցելութեան մի զարդարուած քահանայ և մի վարժապետ։ Երկուսի հեռանալուց յետոյ հարցնում է Մէլիքն.

—Պուղի, սա ձարտար գիւղի քահանան էր. կարդալում ինչպէս է։

—Մէլիքն ապրած կենայ, եթէ 15 ձկնոս ուռկանները (ձուկ բռնելու թոր) գցելու լինին քահանային փորն, Պետրոս առաքեալն էլ գայ և ասէ, ուռկանները գցեցէք փորին աջ կողմն և խառնեցէք. դարձեալ այբի կտոր չգտնուիլ նորա փորումն։

—Վարժապետն ինչպէս է։

—Սանահնու վանքումն է աւարտել իւր ուսումը. Սևանայ ծովին նման է, եթէ մի

կողմից խոր խրամ բանաս, Երևան քաղաքը ջրհեղեղ անելով կը կործանէ. խելքի ծով է վարժապետն։

138.

Նուշում տեսնում են մի ատիճանաւոր թուրք, որ շքանշան կախած ճեմում է։ Մէլիքն ասում է.

—Ագա Պուղի, այս մարդն շատ հարուստ կը լինի։

—Մէլիք, քո աղիզ արևն վկայ, էն է որ վերը առնես քո թաւար ղուշը (շահէն) բերես սորան գրպանների մէջ ձգես որպէս բարակ շունները և հրամայես, բարակ գտէք, բարակ գտէք, դարձեալ մի սև փող չեն կարող գտնել սորա գրպաններում, անկուտի է։

139.

Մի քահանայ նեղացած սրտով գանգատում է Մէլիքին՝ ասելով,—մի գործով գնացել էի Գանձակ, քաղաքումն մնացի երկու ամիս, քահանայք չպատուեցին զիս գէթ մի պատարագ անել տալով։ Մէլիքն,

որովհետև մտադրութիւնն ուրիշ բանի վերայ է լինում, խօսք է որոնում պատասխանելու, օգնութեան է հասնում Պուղին.

—Ա. Տէր, դուք քահանաներդ Նուշի քաղաքս եկող օտար քաղաքացի հայ քահանաները պատուում էք պատարագ տալով։

—Չէ, տալիս չենք, Պուղի։

—Ուրեմն դուք ինչպէս անում էք ուրիշներին, նոյնպէս անում են ձեզ և ուրիշներն։ Ուրեմն ինչ իրաւունքով էք նեղանում և ինչ իրաւունքով գանգատում։

140.

Խանի զուարճաբանն թուրք կարդացողների հետ դիմաւորում է ի պատիւ Մէլիքին։ Նոյն միջոցին շունն հալածում էին մի ոչխար և հարչարում։ Խանի զուարճաբանն ասում է ծիծաղելի.....։

141.

—Պուղի, Մէլիքը շատ ես սիրում թէ մէլիքակինը։

—Խան, մարդ կայ, որ շատ է սիրում խանը, մարդ էլ կայ՝ որ սիրում խանի կինը։

142.

—Ի՞նչպէս է իմ զուարճաքանն, հաւանո՞ւմ ես։

—Արժանաւոր է ձեր անուան և պատուին. մի փոքր առաջ արդէն ցոյց տուաւ իւր շնորհքը ոչխարի և շուների սրախօսութեամբ։ Սափրիչի (դալլաք) նոր սովորող աշակերտի է նմանում, որ ածիլելու ժամանակ կտրում է գլուխ 48 տեղից և փակցնում բամբակ։

143.

—Պուղի, քեզ տամ, տար և երկու տարում լաւ զուարճաքան վարպետ չինիր և ինձ բեր։

—Խան, ինձ տուր մի արջի ձագ, երեք օրում լաւ կարդալ սովորեցնեմ և բերեմ. այնպէս որ դուք ինձանից աւելի լաւ հաւանէք։ Բայց քո զուարճաքանը եթէ 40 տարի անդամ պահելու լինիմ, դարձեալ ոչինչ չեմ կարող ուսուցանել և ամօթալի պիտի ՄՆամ քեզ մօտ։

144.

Խանն, որ անհնարին էր համարում Պուղու խոստման կատարումը և յարմար ժամանակ խիստ պատժելու, իսկոյն հրամայում է տալ մի արջի քոթեթ։ Պուղին տանում է արջի ձագը և մի օր մինչև երեկոյ ուտացնում չամիչ. հետևեալ օր գնում է մի թուրքերէն քերական, ամեն թերթի մէջ դնում մի մի չամիչ, դարձնելով թերթերը՝ ուտացնում չամիչը և քանիցս կրկնում վարժութիւնը։ Երբ տեսնում է որ դազանն ընտելացաւ, մի անգամ էլ առանց չամչի քերականը դնում է իւր աշակերտի առաջ. որի մէջ չամիչ չգտնելով՝ սկսում է մրթմրթալով թերթել եղնգներով ամբողջ գիրքը։ Երրորդ առաւօտեան մի անգամ ևս չամիչ դնելով վարժեցնում է, ապա տանում է խանի մօտ, ուր հաւաքուած են լինում և շատ թուրք կարդացողներ և բէկեր, կանգնեցնում է նաև երկու ոտի վերայ, զետեղում քերականը առաջի թաթում։ Ձագն սկսում է մրթմրթալով դարձնել թղթերը և չամիչ չգտնելու պատճառաւ աւելի պնդաձեռնել մինչև վերջին թերթը

դարձնելն։ Վերջն բերում է իւր աշակերտը և համբուրել տալիս խանի ձեռնը։ Խանն, բոլորովին զարմացած կոչում է.—Կեցցէ՞ Պուղին, կեցցէ՞ Պուղին։ Սոյն գովեստը կրկնում են և ամեն ներկայ եղողներն և Մէլիքն։ Պուղին ստանում է խանից մի ընծայ։

145.

Մի անգամ Մէլիքն Պուղուն հետ գնում է Ամասիոյ դաշտն այծին (ջէյրան) որսալու. Մէլիքն, յոգնածութիւնից և ծարաւութիւնից նեղուած, ասում է.

—Պուղի, այս տեղերքում ջուր կը գտնուի արդեօք։

—Մէլիք, մի ջրհոր կայ մօտ տեղումս։

Ջուրը խմելուց յետոյ Մէլիքն ջրհորին մէջ թքելով ասում է, թիւհ մէջդ. աւելի լաւ կը լինէր որ չորանայիր։

—Մէլիք, Մէլիք, ինչի համար թքեցիր այս հորին մէջ. աշխարհ է, մի օր էլ հարկաւոր կը գայ։

Երկու տարուց յետոյ կրկին որսի են գնում նոյն տեղն, դարձեալ սառակի ծա-

բաւած լինելով խմում է ախորժանօք նոյն ջրից Մէլիքն և կոչում.—Ադա, Պուղի, ինչ ցուրտ և համեղ ջուր է. Ստուգած ոզորմի այս ջրհորը քանդողին (փորողին) հօրն։

—Մէլիքն ապրած կենայ, այս միևնոյն ջրհորն է, որի մէջ երկու տարի առաջ թքեցիր։

Մէլիքն զգում է իւր սխալը, բայց ընաւ չէ խօսում։

146.

Մի գիւղացի դժնիկ (ցաք) ծախող մարդ ամեն անգամ Պուղին տեսած ժամանակ, գոչում է.

—Ա՞խ Ադամ, ա՞խ Ադամ։

—Խաչի (Խաչատուր), Ադամն ինչ է արել քեզ։

—Պուղի, քեզ մատաղ, թէ որ Ադամ խաբուած, պտուղը կերած չլինէր, մենք չէինք քաշիլ այսպիսի չարչարանքներ։

Պուղին տանում է այդ մարդը, հագցնում գեղեցիկ հագուստները, նոյնպէս և նորա կնոջ, գնում Մէլիքի այգում և տալիս այս պատուէրը.

—Թաղեցէք և կերէք այս բոլոր ծառերի պտուղները և վայելեցէք այս բուրաստանի անուշահոտ ծառիկները. բայց ամենեի՛ն և ամենեի՛ն չմօտենաք այս բերանը պինդ փակած կաթսային (մեծ զաղան) ամենեին և ամենեին չբանաք նորա փակ բերանը։ Եթէ սխալուէք, բերանը բանաք, այն իսկ օրում կը հանեմ ձեր նոր հագուստները և դարձեալ կը հագցնեմ ձեզ ձեր հնոտիները և դուրս կանեմ ձեզ։ Մէլիքին էլ խնդրել եմ, որ ամեն օր տալու է ձեր ուտելիքը, խմելիքը և հագնելիքը։ Կրկին ասում եմ ձեզ հա՜, ինչ ժամում որ մօտացել էք կաթսային և բացել նորա բերանի փակը, իսկոյն դուրս եմ անելու ձեզ ձեր հին հագուստներով։

Հազիւ թէ Մէլիքի դրախտանման այգում երեք օր մնում է Խաչին, կինն սատանիկ նեղում է զինքը ասելով. «Ա. մարդ, այն զաղանն լիքը ոսկի պէտք է լինի, մի վախիլ, գնանք, դուրս հանենք ոսկիները և հարստանանք, ո՞վ իմանալու է այս դիշերուայ կիսումն։ Դէ՜, վեր կաց գնանք»։

Վերջապէս մարդն, շատ դիմադրելուց

յետոյ, գնում և բանում են կաթսայի փակը, միջից դուրս է ելնում և փախչում մի մուկն։ Տեսնելով արթուն պահապաններն եղածը, իսկոյն յայտնում են Պուղունն, որ գալիս է այգին և ասում.

—Խաչի, ինչի համար բացիր կաթսայի փակը, չէ՞ որ ասացի քեզ ամենեին և ամենեին չբանալ։

—Պուղի, քեզ մատաղ, կինս ինձ խաբեց։

—Ադամին էլ խաբեց իւր Եւա կինն։ Դէ՜ հանի՛ չորերդ, գեց (արմատ զգենուլ բայի) քո հնոտի զգեստդ և գնա՛ դարձեալ շալակովդ կրե՛ փայտ և ցաք։ Եւ այսուհետև այլևս չասես «ա՜խ Ադամ, ա՜խ Ադամ»։

147.

Հնդկաստանից մի խորամանկ մարդ գալով հիւր է լինում Մէլիքին և այնչափ գովում Հնդկաստանի խաս քարեղէնների և խաս (անկեղծ, իսկական) ակնեղէնների չափազանց աժան լինելը, մինչև անգամ յայտնում է 1000 թուման (1200) ռուբլի առնել Մէլիքից խաբէութեամբ և հեռանալ

Աւեսարանոցից, խոստանում է Հնդկաստան հասցնել պէս, անմիջապէս ուղարկել Մէլիքին 1000 թուման արժողութեամբ ադամանդ, յակինթ, զմրուխտ և ուրիշ թանկագին և պատուական ակունքներ։

Մէլիքն հրամայում է Պուղուն, որ Վարանդայ դաւառի ամբողջ յիմար և խենդ մարդոց անուանց ցուցակը գրէ և ներկայացնէ իրան։ Մէլիք-Շահնազարն, երբ ստանում է խենդերի և յիմարների ցուցակը, տեսնում է որ իւր անունն գրուած է ցուցակի սկզբի տողում, գոչում է զայրացած (կրզնուած).

—Ա. չան տղայ Պուղի, ես խենդ եմ, որ իմ անունը գրել ես յիմարների և խենդերի շարքում և այն թղթի ճակատի առաջին տողում։

—Նորա համար եմ ճակատին գրել, Մէլիք, քեզանից աւելի յիմար և աւելի խենդ մարդ չկայ Վարանդայ դաւառում։

—Ա. դա խէ և ինչ պատճառաւ։

—Այն պատճառաւ, Մէլիք, որ դու 1000 թուման փող տուիր այն անծանոթ և անճանաչ Հնդկաստանցուն։

—Ադա, կարելի է առնում է քարերը և յղում։

—Մէլիք, երբ յղէ քարերը, այն ժամանակ կը ջնջեմ քո պատուական անունը յիմարների և խենդերի շարքից և կը գրեմ Հնդկաստանցու անունը։ (Կամենում է ասել նա քեզանից աւելի յիմար և խենդ լինելու է, որ իւր կողոպտած դրամները ակնեղէնների տալով. յղէ քեզ. յոյսդ կտրիր)։

148.

Պուղու մեծ որդին, մղուած երիտասարդական բուռն եռանդից, մտնում է մի բարձր և ամուր քարայրի մէջ ճգնելու։ Երբ բոլորովին սպառուում է տանից տարած պաշարն, սկսում է գողանալ կովերի հորթերը և ուտել, նոյնպէս և գողանում է անդերում վարած հեղի խաշխաշ, բակլայ, սիսեռ, ոլոռն և ծառոց պտուղներ։ Մի օր յայտնուում են սորա գողութիւններն և բնակարան քարայրն։ Քարայրի առաջ կանգնում է Պուղին և իւր որդու անունը տալով կանչում.

—Իխոիս, Իխոիս (Աւեսիս)։

Ահարկու ձայնով և պատկառելի եղանակաւ պատասխանում է քարայրի խորքից իւր որդին.

—«Ո՞վ ես դու, պիղծ հողեղէն, որ համարձակիս մերձենալ ի քարայրն իմ սուրբ. ի բաց հեռացիր այսի, ապա թէ ոչ, նետք Աստուծոյ և հրեղէն սուրք Հրեշտակաց Նորին ի վայր կործանեսցեն զքեզ ի քթթել ական»։

—Ա. շան տղայ, դու երբ հրեղէն դարձար, եթէ մարդ 2 ամսում հրեղէն դառնար, ես այժմ աստուած դարձած կը լինէի։ Ինչքան ճգնաւորութիւն արիր, բաւական է. երեսդ պա՞ղ, վարձդ կատարամագդ (վաստակ) Երուսաղէմ, Հիզդի-Պուղդի ճգնաւորին օրհնութիւնն քեզ վերայ լինի։ Դէ վար իջիր այդ տեղից։ Աւետարանոցում էլ հորթ չես թողել, խոզի կեսճի չես թողել, էլ խաշխաշ, բակլայ, սիսեռ, ոլոռն չես թողել. բոլորն էլ դողացել և կերել ես, որոց տէրերն ամեն օր բողոքում են Մէլիքին, այնքան շատացել են գանգատաւորներն, որք գնալով և գալով մաշել են Մէլիքարանի դռնակը։ Որդին առած դառնում է տուն Պուղին։

149.

Մի ծերունի մարդ հրաւիրուած էր Մէլիքարան, որ բարեկենդանի խնճոյքում խմում էր իւր կարողութիւնից աւելի։ Պուղին ասում է.

—Ապեր, դինին ծերոց գաւազան է, խմիր, քեզ մատաղ, խմիր, տեսնենք վերջն ինչպէս կը լինի, բանն խմելն չէ, քաջութիւնն՝ պահելն է։

Խնճոյքից դուրս է գալիս ծերունին և դէս ու դէն ծռուելով ուղղում իւր դողդողոն քայլերը դէպի տուն, բայց ծռուելով ընկնում է Մէլիքի ջրաւազանի մէջ։

—Ապեր, դինին ծերոց աւազան է, լող տուր, լող տուր—ասում է Պուղին, որ խելքդ գայ տեղն։

Ծերունին հանում են ջրից և կանգնեցնում մի քարի վերայ, որ ցամաքէին հագուստն. օգնողներն չկարողանալով պահել պպզացնում են քարին վերայ։

—Ապեր, դինին ծերոց պպզան է, պպզի, պպզի, որ մի փոքր հանգստանաս—կոչում է, զուարճաբանն։

Խեղճ ծերունին թափուռմ է կերած և խմած ը յաճախակի որձկալով։ Պուղին կոչում է.

—Ապեր, գինին ծերոց վզվզան է, թափիր, քեզ մատաղ, թափիր, որ սիրտդ հանդստանայ։

150.

Մէլիքն առանց Պուղու դիտութեան մի արբեցող աղքատ կարծուած մարդի տալիս է ողորմութիւն։ Արբեցողն Մէլիքի շնորհած դրամով գնում է օղի և չափազանց խմելով արբում։ Արբածն ջախջախում է մի մարդոյ գլուխը, միւսին բազուկը, մի ուրիշին մատները և ձեռքի դաստակը և իւր տունն գնալով՝ ճղում է իւր կնոջ գլուխը։ Ողջ վիրաւորուածներն դիմում են Մէլիքին և դանդատում։ Պուղին ասում է.

—Աղայ, այսօր մի պատարագ ես անել տուել, այն արբեցող մարդին ողորմութիւն տալով, մի պատարագ ես անել տուել քո հոգուն համար, որ մինչև դատաստանի օրն բաւական է ձեր եօթն մատն ննջեցեալոց։

151.

—Ադա, ես ինչ չարութիւն եմ արել, ողորմութիւն եմ տուել, միթէ մեղք է ողորմութիւն տալն։

—Ողորմութիւն էլ կայ, ողորմութիւն էլ։ Ողորմութիւնը երբ տաս արժանաւոր տեղին, վարձք է, իսկ երբ տաս անարժան տեղին, մեղք է։

Ողորմութեան և դթութեան արժանի են կոյրերն, անդամալոյծներն, երկու ոտքով վոտանգաւոր կաղերն, անտէր հիւանդներն, ձեռներն զօսացածներն, աղքատ ուսանողներն, առաքինի աղքատներն և սոցա նմաններն։

Ողորմութեան և դթութեան անարժան են աչքերն, ոտքերն և ձեռներն առողջներն, աշխատելու կարողութիւն ունեցողներն, ծոյլերն, արբեցողներն, աղքատ ձևացող խաբեբայ մուրացկաններն, և առհասարակ այն մարդիկն, որ իւրեանց ձեռքն ընկած փողերը վոխանակ իւրեանց երախայոց և ընտանեաց հետ վայելելու, վատնում են անվայել ճանապարհաւ։ Այսօրուան քո տուած

ողորմութեան վարձքն եղան, Մէլիք, ջարդուած գլուխներն, կտրուած ձեռքերն, անտեղի հայհոյութիւններն, և զուր տեղից գոյացած դանդատներն և արբածի խելքի կորուստն։

152.

Մի աղքատ ողորմութիւն էր խնդրում Մէլիքից։

—Աղա, սա արժանի է ողորմութեան, տուր, ասում է Պուղին։

Նոյն օրում մի ուրիշ աղքատ էս աղիողորմ ձայնով ողորմութիւն էր խնդրում։ Գութն շարժուած Մէլիքն այն ինչ ուզում էր սովորականից աւելի տալ, ասում է Պուղին.—Մի փոքր համբերեցէք, Մէլիք. ապա հարցնում է.

—Մուրացկան եղբայր, այս մի թուման փողը տալու եմ քեզ. բայց ես Թովմայ առաքեալի աղգականներից եմ, հաւատքս պահասել է, քեզ վերայ նայելու եմ։

—Ես խեղճ, ողորմելի մարդ եմ, անտէր, անտէրունչ մուրացկան եմ. յուսա կեղնի իմ փող։

Արձակում է մուրացկանի գօտին, երևում է մի կամար լի ոսկով։ Թէև շատ դիմադրում է մուրացկանն որ չբացուի կամարն, սակայն Պուղին բանալով թափում է 100 Հոլանդիոյ ոսկի (ըստ ասութեան ոմանց), որը բաժանում է մի մասը եկեղեցուն, մի մասը Ղևոնդեանց անապատի աղքատ միաբաններին և մնացածը դիւղի աղքատներին։

153.

Ադա Պուղի, Դիզափայտ վկայ, որ վերջապէս դու Սողոմոն իմաստունն ես դառնալու։ Ադա, դու մարդաբէ էիր, ռամդաբ էիր, սատանայ էիր. ինչից իմացար որ դա փող ունի։

Մէլիք, երկու չուալ ցորեն տուր, ես քեզ կը սովորեցնեմ իմանալու գաղտնիքը։

—Երեք չուալ ցորեն տուի, տուի հաստատ խօսք։

—Մէլիք, երբ տեսնում ես աղքատը նուրբը զգուշութեամբ դիտիր նորա դէմքը. եթէ կարմրատած լինին մէկի աչքերն, փոքր ինչ ծռուած երեսն և դողդողուն և ձեռներն և նշմարելի կերպիւ գլուխն. հաստատ

իմացած լինես որ նա արքեցող է, ողորմութիւն չտաս։

Երբ տեսնելու լինիս որև է մուրացկան, եթէ ուրախ է դէմքն, կարգին սարգին կանդնած մազերն, հաստատ իմացած լինես որ նա աղքատ չէ, փող ունի. որովհետև սրտի հայելին է դէմքն, փող ունեցողի սիրտն անկարելի է որ տխուր լինի, որքան էլ մարդ ջանայ լեզուաւ սքողել դէմքը որ երևի աղքատ, խղճալի, ողորմելի, այսու ամենայնիւ ursի ուրախութիւնն կը նշմարուի նորա դէմքի վերայ։

Իսկ երբ տեսնելու լինիս որև է մարդի երեսն srsում, տխուր, մազերն ճնմնած, ցից ցից անկուած, երկու ամսով անձրևի երես չտեսած սիտորաթերի նման թոռոմած, աչքերն աղերսալի, հաստատ գիտցիր որ նա ողորմութեան արժանի աղքատ է։ Մանաւանդ զաւակաց հայր աղքատին կամենաս հաղցնել ամենաթանկագին զգեստ, դարձեալ կերևի նորա երեսի և դէմքի և աչքերի վերայ տխրութեան և տրտմութեան նշան. վասն զի սոված են նորա զաւակներն— հոգուն կէսն և սրտի առարկան։

154.

Մի աշուղ ասում է.—Պուղի, կոտորուել էին սազիս բոլոր սիմերն (լարերն), սիմ չճարուեց, ճանապարհի վերայ տեսայ մի մեռած մարդ, հանեցի աղիքները, շինեցի լար և քաշեցի սազիս վերայ։ Այժմ ինչքան աշխատում եմ ուրիշ եղանակ ածել, բոլորովին անկարելի է լինում. միշտ ածում է այս եղանակը—«Ծուր ինձ, տուր ինձ, տուր ինձ»։

—Հասկացայ, աշուղ եղբայր, այդ մեռածն կամ դաւրիշ եղած է, կամ խաբեբայ աղքատ. կամ չինկեանայ և կամ դուրսոլի։ Միշտ ուզած սովոր։

155.

Իմ սազին սիմերն էլ էր կոտորուել— ասում է աշուղի միւս ընկերն – ես էլ մին անմօրուք մեռածի աղիքներից լար շինեցի։ Այժմ ինչ եղանակ որ կամենում եմ ածել, միշտ հնչում է. «Դէ առ, դէ առ, դէ առ։ Քե մեռնիմ, Պուղի, բա այս ինչ եղած է։

—Ուստա, այդ մեռածն էլ եղել է հար-

կատու. երբ պահանջել է Շահն գլխահարկ ոսկի, փողը տալով ասել է. «Դէ առ», Մէլիքն պահանջել է իւր իրաւունքը, ասել է. «Դէ առ», կաթուղիկոսի գործակալն՝ «դէ առ», քահանայ, սափրիչ, աղքատ, եասաւուլ, տանուտէր, գղիր, ևն, ևն, ասել է ամենին էլ տալով՝ «դէ առ»։

156.

Մէլիքն տեսնում է Ամարասի վանքում մի կոյր, որ միշտ դանդատում էր. «իմ բաժինն շատ քիչ է, չեմ կշտանում»։ Մի կիւրակէ օր կաթուղիկոսն մի ամբողջ գառն կարմրացնել է տալիս փռան մէջ և մեծարել տալիս կոյրին, որ երկու ձեռքով չոշափելուց յետոյ կոչում է զարմացմամբ.

—Պահո՜՜, երբ այսքանը բերել են մինակ ինձ համար, արդեօք իրանք որքան կերած կը լինեն։ Բանի՞ գառը մորթած են, որ ինձ հասած է մի ամբողջ գառն։

157.

Ամեն անդամներով կատարեալ անթերի, պնդակազմ, ուժեղ, բարձրահասակ և

յաղթանդամ մի մուրացկան սրտաշարժ խօսքերով ողորմութիւն է խնդրում Պուղուց, որ պատասխանում է.

—Եղբայր, ոտքդ սաղ, ձեռներդ սաղ, աչքերդ սաղ (առողջ). առիւծի նման տղամարդ ես։ Ես քեզ տեղ ամաչում եմ։ Դու, քո այդ ծուլութեամբդ կողոպտում և գողանում ես ճշմարիտ աղքատների բաժինը, այո, արդար բաժինը յափշտակում ես անասելի անիրաւութեամբ։ Գնա, այսուհետև լաւ աշխատիր, դու էլ կեր քո արդար վաստակը, իսկական աղքատներն էլ, քո գերդաստանն էլ, երկնքի թռչունն էլ, գետնի մրջիւնն էլ։ Ո՛վ կարողութիւն ունի աշխատելու, չէ աշխատում, սարսափելի մեղք է գործում։ Զաշխատողն հաց էլ պիտի չուտէ։ Պուղին Մէլիքի հրամանաւ իսկոյն հեռացնել է տալիս կեղծ աղքատը իւր գեղից էլ, ամբողջ Վարանդայից էլ։

158.

Մի անդամ Մէլիքն համբրում է դրամ և զատ զատ դասաւորում ոսկին առանձին, արծաթն առանձին և պղինձն առանձին։

Պուղին իսկոյն առնում է երկու բուռը ոսկի և կանգնում իւր սովորական տեղում։ Կոչում է Մէլիքն.

—Ագա, պէլ ես թէ դիժ։

—Մէլիք, եթէ պել չեմ, ինչ պատճառաւ «Պըլը-Պուղի» ես դրել իմ անունը։ Հարկաւ խենդն անում է իւր խենդութիւնը։

—Ագա, ա պլըկատոր, քեր փողերը, շուտ արա, մարդ կը գայ, քեր որ վերջացնենք հաշիւը։

—Ագա, վատացել է ժամանակն, յափշտակում են միմեանցից, գողանում և տանում ուտում։ Դէ, դու էլ այնպէս համարիր, որ գողացել են փողերդ և տարել։

—Ա. շան տղայ, օրը կէսօրին գողութիւն կը լինի Մէլիքարանում։

—Մէլիք, քո ազիզ արևն վկայ. մեծ մեծ գողութիւններն, պատուաւոր յափշտակութիւններն միշտ տեղի են ունենում կէսօրին թագաւորների և շահերի, սուլթանների և խաների, մելիքների և իշխանների պալատներում և ապարանքներում։

Մէլիքն այլ ևս չէ խօսում...։

159.

Մէլիքն ունենում է մի շատ գեղեցիկ, բայց վերին աստիճան ծոյլ աղջիկ, որի պատճառաւ էլ տան մնացած։

—Մէլիք, Փարզատ աղջիկդ խնդրում եմ իմ որդի Իլիային համար, կը տաս, ասում է Պուղին։

—Ագա տուի, Աստուած շնորհաւոր անէ. բայց արդէն գիտես որ չափազանց ծոյլ է, որ տան օր հաց չտաս, սոված կը մնայ, վեր չկենալ, որ հաց առնէ և ուտէ։

—Մէլիք, ապահով եղիր, ես գիտեմ քաջալրի (քէօհլան) անելու, այնպէս անեմ, որ այծեամի պէս ժիր լինի։

Առաք փառաք պատկում են Փարզատը[1]) և բերում տուն նոր հարսը։ 2 օր հարսին քնաւ կերակուր չեն տալիս Պուղու հրամանաւ, որովհետև քանի անգամ որ ճաշի են հրաւիրում, նա ծուլութեան պատճառաւ միշտ մնում էր նստած։ Երրորդ օրում կերակրի ամանը հրամայում է դնել հարսից

1) Առաջի տպագրութեան մէջ սխալմամբ Հիւրզատ եղած է։

փոքր ինչ հեռի. սաստիկ անօթութիւնից ստիպեալ հարսն սողալով մօտենում է ամանին և ուտում կերակուրը։ Այսպէս հետզհետէ կերակուրը հարսից աստիճանաբար աւելի հեռացնելով, հարսն օրըստօրէ սովորում է վեր կենալ տեղից, շարժուել և հաց ուտել իւր սկսրի հետ։ Պուղին բրդի ոստերը հարսին տալով պատուիրում է.

—Հարս, մինչև իմ դառնալս պէտք է կծկես, եթէ դամ տեսնեմ որ չես կծկել, կը հրամայեմ հաց չտալ։

Վերջապէս հարսն տեսնելով որ անգործ նստելով թէ անօթի, ծարաւ և անպատիւ մնալու է և թէ օր աւուր նուազուելով ընկնելու է ուժից և երեսից, օրէցօր ընտելանում է աշխատութեան և այսպիսի վարժութեամբ լինում է տան տիկին։

160.

Մի քանի ամսից յետոյ Մէլիքն դալիս է տեսնել իւր աղջիկը։ Փարզատն բերդաթելի կծիկները բերում է և տալի իւր հօր։

Մէլիքն հարցնում է զարմացմամբ.

—Փարզատ, այս կծիկները ինչի բերիր և ինձ տուիր։

—Բերել եմ որ կծկես։

—Աղջիկ, խէ՞։

—Այս տեղի սովորութիւնն մեր տան սովորութեան պէս չէ. քանզի մեր տան թէ աշխատես և թէ չաշխատես, կերակուր կուտես, բայց այս տեղ եթէ չաշխատես, սոված կը մեռնիս։ Նորա համար եմ բերել կծիկները որ զիրաւ[1]) տաս, որպէս զի հաց տան որ ուտես։ Այս տեղ հաց չեն տալիս պարապ նստողին։

161.

Մօտենում է Մէլիքի մահն. վերջին անգամ մտնում է անկողին, որից ուղղակի իջնում է նա գերեզման[2]). Վերին աստիճան

---

1) Ահա պարառական հոլով գիւրեաւ, որ ցարդ մնացել է Արցախի հասարակութեան բերանում գործածութեան մէջ։

2) Ամբողջ Արցախը հետազօտած ժամանակ անուշադիր չթողի Պուղին, այլ աշխատեցի սատուգել և կարելոյն չափ ճշտել եղելութիւնը։ Ահա այս է այն տարբերութեան պատճառն, որ կայ ներկայ և նախորդ տպագրութեան մէջ։

սիրու

պատուաբերը, հարուածելով անիրաւութիւնը, ստոյգարութիւնը և անպատուաբեր երևոյթները։

Այժմ պատմեմ ձեր խնդրածը։

163.

Մի գիւղացի աղքատ մարդ իւր որդին տանում է քաղաք և տալիս մի հարուստ վաճառականի և խնդրում որ վաճառականութիւն սովորցնէ իւր որդուն և մի կտոր հացի տեր անէ, որ ապագայում ապրի իբրև լաւ մարդ։

Վաճառականն ընդունում է տղան և, տեսնելով նորա մէջ ընդունակութեան շընորհք, նախ տալիս է երևելի ուսում և լեզուագիտութիւն և ապա սովորցնում վաճառականութիւն, և քանի անգամ էլ իւր հետ տանում է ման ածում շահավաճառ քաղաքներ և երևելի վաճառանոցներ։ Վաճառականիս գործերն օրաւուր յառաջադիմում են յաջողութիւնից յաջողութիւն և բախտաւորութիւնից բախտաւորութիւն։ Այնպէս որ ասես թէ Աստուած մեր այս տղային պատճառաւ օրհնում է մեր

վաճառականի տունը, առ և տուրը, նիստ և կացը. բախտն էլ հեղեղի նման ամեն կողմերից յորդում և բերում է հարստութիւնը և լցնում վաճառականի տունն, խանութն և արկղներն։

Անցնում են մի քանի տարիներ, դպցէս խռովում է բախտն, ներհակ է շրջում անյաջողութեան անիւն. ինչպէս եկել էր, այնպէս էլ գնում անհետանում է մեր վաճառականի հարստութիւնն, դատարկուում են խանութներն, արկղներն և ամբարներն։ Վերջապէս սնանկանում է վաճառականս և Աղամի նման մերկացած ամեն նիւթականից՝ սկսում է չքաւորուել։ Վախճանում են և խեղճ գիւղացի տղայի ամեն ազգականներն, իսկ ինքն տեսնելով որ այլ ևս անկարելի է մնալ իւր աղայի տան, գնում է մի գիւղացի կալուածատէր հարուստ մարդի մօտ, ինքը զինքը ծախում նորա վերայ և փողերը առնելով յղում իւր սնանկացած վաճառականին հետևեալ թղթով։

«Աղա, որովհետև դու լաւ կերած, լաւ խմած, լաւ ապրած սովոր ես, առնես այս գրաբեր մարդիս այսչափ փող, որ է իմ

կեանքիս գինն, և ծախսեմ. Աստուած ողորմած է. ես էլ գանուում եմ այս անուն երկրի, այս ինչ գաւառի այս ինչ անուն գիւղում»։

Մարդ ու կին առնում են փողերը և շատ ուրախանում. կինն ասում է. «Ա. մարդ, ես իմ Աստուած, եթէ մեր փորից ծնուած հարազատ որդին անդամ լինէր, այս աստիճան զոհողութիւն չէր անիլ մեզ համար։ Դէ ուրեմն վեր կաց, դնա և տես թէ ինչպէս է մեր հոգեզաւակն և մեզ համար քեր մի ուրախալի տեղեկութիւն»։

Գնում է մարդն և գտնում իւր հոգեզաւակը, որը գիւղացին եղին հետ լծած վար է անում։ Տեսածին պէս երկու ձեռնով զարկում է իւր գլխին և ասում. «Աւաղ, զաւակս, լաւ էր, որ ես մեռած լինէի, քան քեզ այս դրութեան մէջ տեսնէի։ Տէր, առ իմ հոգին, որ չտեսնեն իմ աչքերն իմ որդու կրածը...»։

—«Աղա, շատ մի ցաւիլ, այս էլ կանցնի»:

Ցեռոյ դառնում է տուն մարդն, պատմում իւր կնոջ տեսածը, շատ ցաւում են երկուքն էլ։

Անցնում է մի ժամանակ, գիւղացի հարուստ կալուածատէրն մեքանալով շնորհալի տղային վերայ, տանում է, մայրաքաղաքում մի հարուստ բանկիրի վերայ ծախում տղան։ Բանկիր տէրն, մի քանի տարում փորձելով տղայի ճիշտ հաշուեպահութիւնը, վերջին ծայր հաւատարմութիւնը, օրինակելի տղնուութիւնը, բոլորովին ազատ է անում և իւր միակ դուստրը—Նախշընիկեար օրիորդը հարմնացնում տղային։ Այնուհետև մեր տղան առած ամսականների մեծ մասը յղում է իւր նախկին աղա վաճառականին, որ գալով տեսնում է իւր հոգեզաւակը նշանաւոր փառքի մէջ, ասստիկ ուրախանալով կոչում է. «Տէր, այժմ առ իմ հոգին, որովհետև այժմ տեսի զաւակս փառքի և հանգստութեան և ուրախութեան և պատուի մէջ»։ Պատասխանում է տղան, «Աղա, շատ մի ուրախանալ, այս էլ անցաւոր է. «Այս ևս անցանէ»:

Դարձեալ անցնում է մի քանի տարի, մեռնում է այն երկրի թագաւորն, որի սերը ընդդէմ չէ լինում ոչ արական և ոչ իգական, որ գահակալէ։ Այն տէրութեան բոլոր նա-

հանգներից և քաղաքներից հաւաքուում են պատգամաւորներ ըստ սովորութեան և թող տալիս Զիմբիւա-զուշին, որ երեք անգամն էլ գնում և կանգնում է մեր տղայի գլխին։ Գալիս են բոլոր պատգամաւորներն, ուրախութեամբ տանում, առաջ փառաջ բազմեցնում թագաւորական աթոռի վերայ, գլխին գնում թագաւորական թագը, ծունկ խոնարհում ամենքն և միասին ասում. «Թագաւորն ապրած կենայ, թագաւորն ապրած կենայ. թագաւորին մին օրն հազար. թագաւորին արևն խնդանք[1])»։

Կրկին գալիս է վաճառականն, իւր հոգեզաւակը թագաւոր տեսածին պէս ուշաթափուում է սասակի ուրախութիւնից, երբ ուշքի է գալիս, ասում է. «Աստուած, քեզ փառք, այժմ կատարեալ է իմ ուրախութիւնն, այժմ իմ աչքերս տեսան պսակուած իմ հոգեզաւակի անմման խոնարհութիւնն, ազնուութիւնն, տիրասիրութիւնն և հաղուագիւտ հաւատարմութիւնն։ Ասում է

1) Գրաբարի ձևն, որ ցարդ մնացած է Արցախում. այսինքն է «ցարև թագաւորին խնդանք»։

վերստին թագաւորն. «—Աղա, շատ մի ուրախանալ, որովհետև «Այս եւս անցանէ». ապա ասում է.—Աղա, քո գործերի յաջողութիւնն գագաթնակէտին հասած ժամանակ քանի՞ հազար թուման ունէիր, երբ սնանկացար։—Պատասխանում է. յիսուն հազար։ Թագաւորն իւր ամսականներից 50,000 թուման տալով ասում է.—Աղա, դէ, տար այս փողերը. էլի առաջուան պէս փառաւոր ապրիր և փառաւոր առ և տուր արա։

Անցնում են դարձեալ մի քանի տարիներ, գալիս է վաճառականն, տեսնում է որ մինոյն նոր մեռած թագաւորի գերեզմանի վերայ ձգած են մի մարմարիոն տապանաքար, որի վերայն քանդակուած է այն համառօտ արձանագրութիւնն. «Այս եւս անցանէ»։

Մի քանի տարի անցնելուց յետոյ, խորին ծերութեան հասած վաճառականն վերջին անգամ գալիս է, որ օրհնել տայ թագաւորի գերեզմանը, տեսնում է որ այլևս չկայ մարմար տապանաքարն, քանզի այս ևս անցել էր։

164.

Մէլիք, մի աղուէս ընկնում է որոգայթի մէջ, տէրն, առանց սատկեցնելու, սկսում է մաշկել եռևի կողմից մինչև կէսը. մորթին ածում է գլխովը, կարծելով թէ այլևս չփախչէր, հանում է առաջի երկու տոտները որոգայթից, իսկոյն ծլկում է (փախչել) աղուէսն։ Մի գայլ տեսնում է և հարցնում.—Աղուէս եղբայր, այդ ինչ է քո հալն, շունն էլ քո օրում չլինի։

—Շնորհակալ եմ, գայլ եղբայր, 7 կրօնաւորից երջանիկ եմ որ խաթրս հարցրիր, շատ անգամ մեռնում է միայնակեաց կրօնաւորն, ոչ ոք չէ իմանում, երբ առնում են մեռելի հոտը սենեկի դռնից, ներս են մտնում և թքում վախճանածի մօտ ասելով. թիւհ, չիմացանք հիւանդ լինելը որ գայինք—այցելէինք։

165.

1792-ին վախճանում է Վարանդայ գաւառի Մէլիք-Շահնազարն[1]), որին յաջորդում է իւր որդի Մէլիք-Ջիւմշիւտն։ Ինչպէս պատմում են, այնուհետև Պուղին ապրում է առանձին իւր զաւակների և կնոջ հետ։ Պուղին մասնակցում է այնուհետև հարազատ մէլիքների և հայ քաջերի խմբին, մանաւանդ Աղա-Մամատ-Շահի կրկնակի արշաւանքների ժամանակ մինչև 1805 թիւն։

166.

1798—1798 մեծ սովի և մահտարաժամի ժամանակ վախճանում են Պուղու կինն, որդիքն և հարսներն։ Պուղին ծախում է իւր տունը, պարտէզը և այգին և դրամները լցնում մի փոքր խուրջինի մէջ և յաւիտեան բաժանուում Աւետարանոցից։ Գիւղից հեռանալու ժամանակ հարցնում են տեսնողներն։

1) Մէլիքս թողնում է չորս որդի Ջիւմշիւտ, Յուսէյին, Ջհանկիր և Ջհանբաշխ։

—Պուղի, այդ ինչ է շալակած խուրջինիդ միջինն։

—Տունս, բաղս, բաղչաս։

167.

Պուղին իւր խորին ծերութեան մէջ հիւանդ էր Շօշու գիւղում։ Հաւաքուում են ամեն քահանաներն և ժողովրդականք իւր անկողնու շուրջն և կարեկցաբար հարցնում.

—Պուղի ապեր, ինչ է ուզում սիրտդ, քեզ մատաղ, ասա, որ առնենք, բերենք, ուտես և օրհնես մեզ։

—Ես ձեզ մատաղ, ձեզ կեսպիւռն (երկինքն) օրհնէ, ձեզ օրհնէ այն Աստուածն, որի ձեռքից վերև ձեռք չկայ (բացի Աստուծուց չկայ ուրիշ Աստուած և ուրիշ բարձր ձեռք)։ Ձեզանից ուզում եմ դրախտի խընձոր, անմահական բաժակ. Աստուծոյ հաց, Քրիստոսի օրհնած հայը և գինին. ձեզանից ուզում եմ Սրբութի՛ւն, որ ճաշակուեմ, գնամ Քրիստոսիս մօտ։ Խնդրում եմ ձեզանից թաղել իմ մարմինը այն քարայրում, որի մասին արդէն ես ձեզ ասել եմ, և ան-

նունը կը դնէք (կանուանէք) «Պլը-Պուղու քարայր»։

Վախճանեց Պուղին և ամփոփուեց քարայրին մէջ, որ կայ Շօշու և Արկաթալու գիւղերի մէջ մեծ հանդիսով և պատուաւոր յուղարկաւորութեամբ։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Ֆ-8101/536 ԹՀԴԴ

Հեղինակի երկասիրութիւններն

Տպեալ

1. Մկրզա և Աննա . . պատռեալ
2. Արազը տարին կտարի . . »
3. Պլը-Պուղի նախկին տիպ . . »
4. Զնաշխարհիկ տղայ . . . .
5. Գաղտնիք Ղարաբաղի (թարգմ.) . .
6. Քննադատութիւն քննադատութեանց 40 կ.
7. Աղուանից երկիր և Դրացիք . 1 բուբ.
8. Արցախ . . . . 2 բուբ.
9. Քրիստոնէական վարդապետութիւն 45 կ.
10. Զօրանն ու նշանածը . . 40 կ.
11. Բարոյական առածներ . . պատռեալ
12. Մատչելի քարոզներ Ա. տետրակ »
13. » » Բ. » »
14. Աստուածային հրահանգ Հանրապարտուց . . . . 80 կ.
16. Պատմութիւն Աղուանից Ա. հատ. 1 բուբ. 30 կ.
ճանապարհածախսով 1 » 50 կ.
16. Պլը-Պուղի Բ. տպագ. ճանապարհածախսով . . . . 45 կ.

Ա. Նատիպ

Նախապաշարմունք

Աստուծոյ օրհնած տունն

Պատմութիւն Աղուանից Բ. հատ.

Ցանկացողք կարող են դիմել տպուած գրքերու համար Ս. Էջմիածին **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցին**